№ 9 (186) XVII ՏԱՐԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
REDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՕՆԳՐԷՍՆԵՐ ԵՒ ՀԱԿԱՄԻԼԻՏԱՐԻԶՄ

Հաագի երկրորդ համաժողովն էլ վիժեց, ինչպէս վիժել էր առաջինը։ Մօտ երեք ամիս տենդային աշխատանք և արդիւնքը—ոչինչ։ Մի հոյակապ կատաղերգութիւն, որին մասնակից են երկու հարիւրի չափ ամենահմուտ դիւանագէտներ։ Նա ոչ միայն անընդունակ է յայտնուում լսելու անգամ մանր, կոտորուող ազգերի ձայնը, որ խաղաղութի՛ւն է աղաղակում, այլ նա բացարձակապէս անկարող է հանդիսանում՝ գէթ մի քայլ առաջ տանելու իր ստանձնած առաքելութիւնը՝ վերջ տալ անընդհատ սպառազինութեան և արգելք դնել պատերազմներին։ Ի՞նչ են մի քանի խղճուկ որոշումները այդ տեսակէտից։ Ի՞նչ կարող է անել թէկուզ ամենաբարձր, ամենաձեռնհաս Հաշտարար Ատեանը, երբ մէկը կառավարութիւններից կամ թագակիր բռնաւորներից սրտանց ուզում է պատերազմ։ Աշխարհը տակաւին հեծում է կապիտալիզմի ու բռնութեան նշանակի տակ և ժողովուրդների հրամանատարները, անյագուրդ ախորժակներով ու անսահման քմահաճութեամբ՝ վարում են նրանց ճակատագիրը։

Յարաբերական ազատութիւն է վայելում Արևմուտքը, բայց դեռ իսկական ազատութեան շէմքումն է միայն։ Աշխատաւորական մեծ զանգուածը, կիսով չափ արդէն գիտակցութեան հասած, հսկում է անձկութեամբ այդ տանջալի ու ճակատագրական շէմքի վրայ, միշտ աւելի ոգի առնելով, միշտ աւելի սեղմելով շարքերը և պատրաստելով անել վերջին դիւցազնական թռիչքը դէպի ազատութեան թագաւորութիւնը... բայց նա դեռ ստիպուած է անզօր ու անխօս վկայ լինելու իր իրաւունքների ոտնահարումներին, նա դեռ չունի անհրաժեշտ ոյժը՝ այդ իրաւունքներն ապահովելու։

Եւ միագլխեան ու բազմագլխեան բռնաւորները քաջալերուում են այդ իրողութիւնից և միշտ նորանոր վարիացիաներով խաղացուում է „տիեզերական խաղաղութեան" կատակերգութիւնը։ Ինչո՞ւ չեն համաձայնուում ամենաէական խնդրի շուրջը, ինչո՞ւ չեն ուզում նուազեցնել սպառազինուած բանակները։ Եթէ բոլոր կառավարութիւնները անկեղծօրէն կամենային այդ—ինչո՞ւ պէտք է այդքան դժուարանար միջազգային զինաթափութեան գործը... Բայց նա յայտնուում է մի դատարկ ուտոպիա, մի սին բանդագուշանք, որովհետև դեռ կան պետութիւններ՝ իմպերիալիստական, նուաճողական ախորժակներով։ Նա յայտնուում է մի դատարկ ուտոպիա, որովհետև դեռ կան քաղաքակիրթ հասարակութեան մէջ իշխող ու հպատակ դասակարգեր և որովհետև այդ իշխողները՝ իրենց դասակարգային տենչանքներն իրագործելու համար, իրենց ապրանքների արտահանութեան լայն ասպարէզներ բաց անելու համար՝ պատրաստ են նետուել ամենաարիւնալի արկածների, պատերազմների մէջ և աշխատաւոր ժողովուրդների արեան գնով ամրացնելու իրենց դասակարգային տիրապետութիւնը։

Եւ որքան աւելի է առաջ ընթանում հասարակական էւոլիւցիան, այնքան աւելի է շեշտուում պատերազմների դասակարգային բնաւորութիւնը։ Երբեմն դեռ իդէօլոգիան մեծ դեր էր խաղում իշխողների քաղաքականութեան մէջ։ Պատերազմները մղուում էին յաճախ յանուն ազգային միութեան։ Իտալիան ազատագրուում էր Աւստրիայի լծից և կազմում ուրոյն ազգային պետութիւն։ Գերմանիան ազատուում էր միջնադարեան պարտիկուլարիզմից և բաժան-բաժան ու հակամարտ երկրների տեղ՝ կառուցանում էր ազգային հոյակապ, միաձոյլ շէնքը... Բայց այսօր չքացել է իդէօլոգիական պատրուակների այդ վերջին մնացորդն ևս և բուրժուական ռազմատենչ դասակարգերը, յօրինելով միջազգային ընդհարումներ, հնազանդուում են միայն և միայն իրենց դասակարգային լծունգներին։ Այդպէս է ֆրանսիական արդի բուրժուազիան, որի մի մասը եռանդով հրում է կառավարութեանը Մարոկկոյի դէմ, այդպէս է գերմանական բուրժուա-իւնկերութիւնը, որ շարունակ արկածներ է փնտրում նոյն Մարոկկոյում և երկրագնդի ուրիշ կողմերում. այդպէս է անգլիական իմպերիալիզմը, որ ձգտում է իրեն ստորադրել վայրենի ու բարբարոս մարդկութեան ազատ մնացած հատուածները։ Այդպէս է Ամերիկան, այդպէս է և ազնուական-միապետական Ռուսաստանը, որ երէկ ձգտում էր գրաւել Մանջուրիան—մի երկիր, որ ռուս ժողովրդի համար գոնէ արժէք չունի, ինչպէս և Մարոկկոն՝ ֆրանսիական և գերմանական ժողովրդների համար։

Եւ ահա դասակարգային շահերի պատուանդանի վրայ բազմած Մողոքը միշտ աւելի և աւելի սրում է իր նուաճողական ախորժակները։ Գերմանիան, որ նորագոյն միլիտարիզմի օրրանն է, շարունակում է աւելացնել իր զօրքն ու նաւատորմը, թէև ունի արդէն զինուորական ահագին ոյժ։ Նա ուզում է հաւասարիլ մօտաւորապէս Բրիտանիային, որի նաւային զօրութիւնը 3—4 անգամ աւելի է գերմանականից։ Հիւսիսային Ամերիկան անգամ, երբեմն խաղաղ մեծ հանրապետութիւնը, արդէն հասցրել է իր նաւային բիւջէն բրիտանական չափերին։ Ֆրանսիան, Աւստրիան, Իտալիան

նոյնպէս եռանդով աճեցնում են իրենց զօրքերը... Եւ միաժամանակ—խաղաղութեան կօնգրէսներ, միաժամանակ վեհապետների յաճախակի տեսակցութիւններ, սրատաւուչ ճառերով, խաղաղութեան ու եղբայրութեան մեծադղորդ ծանուցումներով։ Բոլորն էլ խաղաղութիւն են աղաղակում, բայց և բոլորն էլ պատրաստւում են պատերազմի...

Ի՞նչ կարող են անել միլիտարիզմի այդ խելագար տենդի դէմ խաղաղասէր առաքեալները, համաշխարհային եղբայրութեան իդէալօգները,—նրանք, որոնք ուղում են խաղաղ, անարիւն ճանապարհով վերջ տալ պատերազմի համաճարակին։ Որքան էլ ազնիւ եռանդ թափեն նրանք—նրանց ճիգերը ևս դատապարտուած են ապարդիւն մնալու, ինչպէս պաշտօնական, դիւանագիտական կօնգրէսներինը։ Կարնէգիները կարող են հոյակապ պալատներ կանգնեցնել խաղաղութեան համար, Պասսիները, Զուտներները և Մօնտաները կարող են իրենց կեանքերը մաշել խաղաղարար համաժողովների ու յանձնաժողովների մէջ. արդիւնքը՝ ոչինչ է, համարեա ոչինչ, քանի դեռ անպատրաստ է Մեծ Համը—աշխատաւոր ժողովուրդը, քանի դեռ կանգուն է կապիտալիստական հասարակութիւնը իր դասակարգային բաժանումներով ու կռիւներով։

Տիեզերական խաղաղութիւնը այդ ճանապարհով չէ, որ պիտի իրագործուի։ Պատերազմները այդ ճանապարհով չէ, որ պիտի վերանան։ Նրանք կը վերանան, ինչպէս պատմութեան վաղեմի ահեղ խարազանները,—մասսային արիւնահեղ ըմբոստացումներով, ժողովուրդների ապստամբութեամբ։

*

Դարձեալ սօցիալիզմն է, որ առաջադրեց միլիտարիզմի դէմ պայքարելու լաւագոյն մեթոդը։ Բայց սօցիալիզմը ևս երկար վարանեց։ Տասնեակ տարիների ընթացքում նա միայն հոլովում էր տարտամ ու շաբլօն խօսքերը ազգային միլիցիաների, ընդհանուր, համաժողովրդական զինաւորութեան մասին, բայց անկարող էր լինում պատասխանել էական, հրատապ հարցին՝ ինչպէ՞ս արդեօք խուսափել պատերազմներին։ Միւս կողմից, իւրաքանչիւր երկրի սօցիալիստ պարագլուխները երբեմն-երբեմն շեշտում էին իրենց հայրենասիրական զգացումները և յայտարարում էին, որ պատրաստ են վտանգի դէպքում պաշտպանութեան գնալ հայրենիքին։ Ինտերնացիօնալիզմը կատարեալ չէր. ամեն ոք զգում էր, որ կայ մի արատ, մի տանջող հակասութիւն սօցիալիստների ընթացքի մէջ, որ սօցիալիզմը և „հայրենասիրութիւնը“ որոշ դէպքերում կարող են բաղխիլ և ջնջել իրար, որ պէտք է աւելի որոշ, աւելի յստակ և աւելի կտրուկ յայտարարութիւններ անել՝ միջազգային գալոց հաւանական ընդհարումների առթիւ։ Սօցիալիզմի պրոփանացիան չը լինէր (սրբ. պղծումն), եթէ գերմանական սօցիալ-դէմօկրատները, ենթարկուելով մի նոր Բիսմարկի պրովօկացիաներին, գնային կոտորելու ֆրանսիական պրոլետարիատին։ Սօցիալիզմի դէմ նոյնպիսի կոպիտ մեղանչումն կը լինէր, եթէ ֆրանսիական կամ գերմանական սօցիալիստները, հնազանդուելով նոյն բուրժուա-հրամանատարների սադրանքներին՝ թեթև սրտով գնային ջարդելու Մարօկկոյի դժբախտ ժողովրդին։ Դա ոչ սօցիալիզմ կը լինէր և ոչ էլ հայրենասիրութիւն։

Ահա այդ կարգի ճշմարտութիւններ էին, որ պէտք է յայտարարէր արդէն հասունացած սօցիալիստական գիտակցութիւնը։ Եւ փաստը ցոյց տուեց, որ այդ վերջինը ամենից աւելի հասունացած է՝ դարձեալ Ֆրանսիայում։ Ի պատիւ այդ երկրի պէտք է ասել, որ այդտեղ է, որ ծնունդ առաւ ու ձևակերպուեց սօցիալիզմի հողի վրայ ամենայստակ հակամիլիտարիստական հոսանքը։ Ինչպէս ամեն մի նոր քարոզ, նա աչքի էր ընկնում իր ծայրայեղութիւններով։ Հէրվէն, այդ նոր հոսանքի պրօպագանդիստը, հանդէս եկաւ, որպէս մոլեռանդ հակապատրիօտ, նա ժխտեց հայրենիքը և յայտարարեց, որ ինքն իր համախոհներով դասալիք (déserteur) կը լինին և ընդհանուր գործադուլ կը քարոզեն նոյնիսկ այն դէպքում, երբ Ֆրանսիան վերստին կը գալարուի բիսմարկեանութեան յաղթական ճիրաններում։ Հերվէյեան իդէալիզմը այդպիսով այլասերւում է, դառնում կատարեալ այլանդակութիւն։

Բայց, կրկնում ենք, այդ ծայրայեղութիւնները յատուկ են բոլոր նոր թէօրիաներին։ Ամեն մի նոր հոսանքի քարոզիչ դիմում է, յաճախ գիտակցաբար, այդպիսի աղաղակող ծայրայեղութիւնների, որպէսզի ուժգին զարնէ մարդկանց նեարդերին և ուշադրութիւն հրաւիրէ իր վրայ։ Ինքը սօցիալիզմը սկզբներում զերծ չէր նոյն ծայրայեղութիւններից. նրա տաղանդաւոր քարոզիչներից ոմանք—Մարքս, Էնգելս և այլն—իրենց նախնական տեսութիւնների մէջ ժխտում էին հայրենիքի գաղափարը, յայտարարելով, որ աշխատաւորը չունի հայրենիք... բայց սօցիալիզմը երկար չը դաւանեց այդ աբսուրդը և իրենք հեղինակներն իսկ կամաց-կամաց հրաժարուեցին նրանից։

Հերվէյիզմը ևս չի յարատևի իր մաքուր, նախնական ձևով։ Նա արդէն իսկ էւօլիւցիայի է ենթարկուում։ Աւելի մեծ, տաղանդաւոր դէմքեր—Ժօրէս, Վալեան և այլն—զատեցին այդ թէօրիայի առողջ կորիզը և ձևափոխուած ու յարմարեցրած իրականութեան պահանջներին՝ ներկայացրին համաշխարհային սօցիալիստական բանակին։

Այդ նոր ձևափոխուած հերվէյականութեան ամենապերճախօս քարոզիչն է այսօր Ժան Ժօրէս։ Նա նրա պաշտպանն էր Շտուտգարտի կօնգրէսում։ Եւ նրա ու Վալեանի կազմած բանաձևի մի զգալի մասը մտաւ արդէն կօնգրէսի ընդունած բանաձևի մէջ։ Այսօր ինդիրը արծարծուում է բոլոր երկրներում և յարուցանում է անհնարին աղմուկ։ Ֆրանսիայի մէջ մասնաւորապէս՝ բարձրացել է մի անսովոր վայնասուն։ Բուրժուական մամուլը կատաղութեան շանթեր է թափում... Ժօրէսի վրայ։ Հերվէյին արդէն հանգիստ են թողնում և որոտում են Ժօրէսի դէմ։ Բնական ցասում։ Հերվէն մի աննշան մեծութիւն է, որի քարոզը վաղօրօք արդէն համարում էին դատապարտուած։ Իսկ Ժօրէսը մի ոյժ է, որի յարիլը այս կամ այն հոսանքին կարող է ահագին զարկ հաղորդել այդ հոսանքին։

Բայց մեծ հրապարակախօսը անխռով առաջ է տանում իր քարոզը բազմամարդ միթինգներում։ Ի՞նչ է ասում նա։

—Պէտք է մղել յամառ ու յարատև պրօպագանդ

զօրանոցներում, զինուորների ու նորակոչների մէջ, արծարծելով հակամիլիտարիզմի գաղափարը, պէտք է մղել նոյն պրօպագանդը ընդհանրապէս երիտասարդութեան մէջ, բրօշիւրներով ու դասախօսութիւններով, պէտք է մի խօսքով վաղօրօք արդէն կերպարանաւորել ապագայ զինուոր-քաղաքացիների ուղեղները, մտցնել նրանց մէջ դասակարգային գիտակցութիւն, ներշնչել ազգերի եղբայրութեան մեծ գաղափարը, որ անհաշտելի հակասութեան մէջ է պատերազմական մօրալի հետ։ Այլն Այլն։ Իսկ երբ պատերազմը անուամենայնիւ կը պայթի երկու քաղաքակրթուած պետութիւնների մէջ, երբ որևէ մէկը այդ պետութիւններից յարձակողական տենդով բռնուած, չի ուզի համակերպուել իր աշխատաւոր ժողովրդի բողոքներին և չի ուզի դիմումն անել միջազգային Հաշտարար Ատեանին, այն ժամանակ այդ ըմբոստ, ռազմասէր պետութեան ժողովուրդը, պրոլետարիատը, աշխատաւոր ընդհանրութիւնը, իր ձայնը լսեցնելու համար, կը դիմէ ամենաազդու յեղափոխական միջոցներին,—ընդհանուր գործադուլի, ընդհանուր դասալքութեան և մինչև իսկ՝ ապստամբութեան... Նա կ՝ապստամբէ իր հայրենի բուրժուական կառավարութեան դէմ, պատնէշ կը դնէ նրա ռազմասէր, յարձակողական ընթացքի առջև և այդպիսով կը կարողանայ անհնարին դարձնել պատերազմը...

Ահաւասիկ հակամիլիտարիզմի նորագոյն ձևակերպութիւնը, որ ներկայացնում է ֆրանսիական սօցիալիզմը յանձին Ժօրէսի, և պրօպագանդի այդ ձևը ամենից աւելի էր համակրութիւն գտնում Շտուտգարտի համագումարում։ Ֆօլլմար և Բէբէլ փորձեցին իրենց պահպանողական հեղինակութեամբ տապալել նրան, բայց չ՝աջողեցին, և այսօր Գերմանիայի սօց.-դեմօկրատական մամուլի մէջ լսւում են արդէն հաւանութեան ու ներբողի բացականչութիւններ՝ ֆրանսիական հակամիլիտարիզմի հասցէին։ Բոլոր սօց.-դեմօկրատները չեն մտածում Բէբէլի և Ֆօլլմարի պէս։

„Այն ոգին—ասում է Դրէզդէնի հեղինակաւոր „Sächsische Arbeiter-Zeitung“-ը—որով ներշնչուած ֆրանսիական սօց. կուսակցութիւնը միլիտարիզմի խնդրի մէջ՝ ներկայանում է իբրև մեծարժէք մի տարր միջազգային սօցիալիզմի համար և սքանչելի է, որ նրա մի մասը մտել է Շտուտգարտի կօնգրէսի վերջնական բանաձևի մէջ։ Ռազմական աւիւնը, որ տիրում է ֆրանսիական սօցիալիզմի մէջ, կարող է իբրև օրինակ ծառայել մասնաւորապէս գերմանական սօցիալ-դեմօկրատիայի համար“։

Տարակոյս չը կայ, որ ֆրանսիական ոգին պիտի յաղթանակէ, որ Ժօրէսի ձևակերպութիւնը հետզհետէ պիտի նուաճէ մտքերը բոլոր քաղաքակիրթ երկրների մէջ, քանի որ նա առաջադրում է ամենաբանաւոր և ամենաազդու գործելակերպը, որ տրամաբանօրէն հետևում է սօցիալիզմի էութիւնից իսկ։ Դա կը լինի մահացու հարուած պատերազմասէր իշխողների գլխին։ Դա կը լինի խաղաղութեան գործի յաղթանակը՝ դէթ քաղաքակրթութեան հորիզոններում։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Քաղաքական-յեղափոխական հարցերի լուսաբանութեան պատրուակով՝ մի տգեղ, նոյնիսկ անտանելիութեան չափ անվայել պօլեմիկ է սկսուած արտասահմանեան հայ մամուլի մէջ։—Հարցերը, ծրագիրները, կանոնադրութիւնները, անձնաւորութիւնները խառնուած են մէկ-մէկու և սառնասիրտ մտածողը ըմբռնել չէ կարող, թէ ինչպէս կարելի է այդ աստիճան թեթևամիտ լինել այնպիսի խնդիրներում, որոնք վերաբերում են գաղտնի կազմակերպութիւններին և նրանց ձեռնարկներին...

Դաշնակցական մի քանի թերթեր ստիպուած են մասնակցութիւն ընդունել այդ ապարդիւն բանակռուի մէջ, և ինչպէս յաճախ պատահում է, շատ առաջ գնալ՝ նոյնիսկ—մենք համոզուած ենք—հակառակ իրենց ցանկութեան և մտադրութեան։

Տարաբախտաբար, սպառուած թուղթն ու մելանը—նպատակին չեն հասնում։ Եւ ի զուր են վատնւում այն արդար ցասումները ու գեղեցիկ խօսքերը, որոնց նպատակն է հակառակորդներին բան հասկացնել, ճամբայ բանալ յեղափոխական մտքի առջև, ապնւացնել զգացմունքները... „Ամենավատ խուլերը նրանք են, որոնք լսել չեն ուզում“—և այդ գիտակից-խուլերը այնքան յամառ են և այնքան բազմաթիւ մեր պօլեմիստների ու քաղաքական խմբերի շարքերում—որ կատարելապէս ապարդիւն աշխատանք պիտի համարուի նրանցով զբաղուիլը, և նրանց յեղաշրջելու ջանքերը։

Ահա թէ ինչու հրաւէր ենք կարդում դաշնակցական թերթերին—և այդ հրապարակով, որպէսզի հակառակորդներն էլ այդ լսելու հնար ունենան—վայր դնել գրիչը և անպատասխան թողնել այն բանակռիւը և յարձակումները, որոնք գաղափարական չեն, չունին ծրագրային իմաստ, չեն նպաստում յեղափոխական և սօցիալիստական գիտելիքների տարածման, և ուրեմն ծառայում են լոկ անձնաւորութիւնների և կուսակցական սին, խղճուկ ու կրքոտ միտումներին։

Ոչ մի պատասխան՝ զրպարտութեան, ոչ մի ապատուութիւն՝ կուսեցնող կոյր կրքերին։ Կան դէպքեր, երբ ապստամբական լռութիւնը աւելի կրթիչ է, քան այն անթիւ յօդուածները, լի հայհոյանքով և քայքայիչ թոյնով, որոնք ստորացնում են ընթերցողի զգացմունքը, կոտրում նրանց հաւատը դէպի յեղափոխութիւնը, ատելութիւն տարածում այն շարքերում, որոնք երբեմն խանդավառ էին և յափշտակուող։

Դաշնակցական թերթերը՝ առանց այդ ապարդիւն պօլեմիկի ևս՝ ահագին գործ ունին իրենց առջև—պարզել մեր ծրագիրը, տարածել ժողովրդի բոլոր խաւերի մէջ մեր քաղաքական և տնտեսական պահանջների իմաստն ու միջոցները, շաղկապել մարտական-յեղափոխական տատանուող մտքերը, նպաստել մեր շարքերի զտման և լայնացման։

Ու այդ աշխատանքի ընթացքում մնալ՝ ասպետ, շիտակ, խստապահանջ՝ դէպի ներսը, մեծահոգի՝ դէպի հակառակորդները։

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Մեր կուսակցութեան „Ծրագիրը", մշակած Դ-րդ Ընդհանուր Ժողովի կողմից, լոյս տեսաւ առանձին բրochիւրով: Նրա միւս մասը՝ „Մեր իրականութիւնը" բիւրեղահայերի եւ կովկասահայերի արդի վիճակը՝ լոյս կը տեսնի առաջիկայում: „Դրօշակի" ներկայ համարում տպագրում ենք „Ծրագրի" ընդհանուր տեսութիւնը, մեր ժողովրդի այն խաւերի համար, որոնք կազմակերպութիւնից դուրս են, եւ որոնք ուրեմն միայն „Դրօշակի" էջերից կարող են ծանօթանալ նրան:

Մարդկութեան առաջադիմութիւնը, որ գնալով ազատում է մարդուն բնութեան ուժերի հպատակութիւնից և նրա հլու սպասաւորը դարձնում երբեմնի աստուածներին, չէ կարող կատարեալ նկատուիլ, քանի դեռ մարդկային մտքի և աշխատանքի նուաճումները հաւասարապէս չեն ծառայի հասարակութեան բոլոր անդամների բարօրութեան։

Բոլոր հասարակութիւնների մէջ՝ դեռ անյիշատակ ժամանակներից ի վեր՝ մենք դիտում ենք դասակարգային բաժանումներ—իշխողներ և հպատակներ, կեղեքողներ և կեղեքուողներ։

Հասարակութիւնը ամեն տեղ վերածուած է երկու անհաւասար հատուածների.—շահագործող փոքրամասնութիւնը, իր ձեռքն առած համայնքի, ցեղի հասարակական և քաղաքական կեանքի ղեկը, ստեղծում է օրէնքներ ու իրաւակարգեր, որոնց միջոցով խլում է աշխատաւոր մեծամասնութեան ձեռքից նրա արտադրած բարիքները և դարձնում նոր զէնք՝ նոյն աշխատաւորներին աւելի և աւելի հպատակեցնելու, կեղեքելու համար։

Աշխատանքի կազմակերպուած շահագործման նախնական և ամենակոպիտ ձևն էր հնադարեան ստրկութիւնը,—մի սիստէմ՝ որով աշխատաւորների ահագին բանակներ, զուրկ մարդկային ամենատարրական իրաւունքներից, մատնուած էին իրենց տէրերի անսահման քմահաճոյքին։

Նրան յաջորդեց միջնադարեան ճորտութիւնը, համեմատաբար աւելի մեղմ, բայց աւելի լայն շրջան ընդգրկող սիստէմ, ուր աւատականութիւնը (ֆէօդալիզմ)—թագաւոր ու զօրավարներ, վասսալներ, աշխարհիկ ու հոգևոր իշխանութիւններ—կազմակերպուած իբրև կեղեքիչների մի հզօր ու համատարած բանակ, ծծում էր բազմամիլիօն գիւղացիութեան վաստակը, հրով ու սրով լուծելով նրա ազատագրական ամեն մի ձգտումը։

Փոքր ինչ ազատ շունչ էին քաշում այդ միջնադարեան հասարակութեան մէջ՝ առևտրական ու արհեստաւոր դասերը, որոնց ծառայութեանը առանձնապէս պէտք ունէին իշխողները։ Արդիւնագործութեան ու հաղորդակցութեան միջոցների զարգացման հետ՝ բնական տնտեսութիւնը միշտ աւելի և աւելի վերածւում էր փողային տնտեսութեան. հնչուն դրամը դառնում էր փոխանակութեան միակ միջոցը, մի ոյժ, որի առջև խոնարհւում էին պատերազմասէր, արկածախնդիր հրամանատարները, և առևտրական տարրը, իբրև այդ նոր ոյժի ներկայացուցիչ, իբրև միջնորդ արժէքների փոխանակութեան մէջ, ստանում էր միշտ աւելի ու աւելի ծանրակշիռ գործօնի նշանակութիւն պետական կեանքում, վայելում էր զանազան առանձնաշնորհումներ և յարաբերական ազատութիւն։

Արհեստաւոր տարրերը ևս, շնորհիւ իրենց մէջ վաղաժամ առաջացած համքարական կազմակերպութիւնների ու հաւաքական պայքարների, կարողանում էին որոշ չափով մեղմացնել իրենց դրութեան վրայ ծանրացած ճնշումները։

Ահա այդ տեսակ, համեմատաբար նպաստաւոր պայմաններում աճելով, հասարակական երկու դասերը առաջ բերին ժամանակի ընթացքում այն պատմական, հռչակաւոր երրորդ դասակարգը, բուրժուազիան, որին վիճակուած էր՝ գիտակից ոյժերի աջակցութեամբ՝ ահագին յեղաշրջում կատարել հասարակական յարաբերութիւնների մէջ։

Հասնելով զարգացման որոշ աստիճանի՝ նա ըմբոստացաւ աւատական կարգերի դէմ և սկսեց կազմակերպուած, երկարատև կռիւ։ Հրապարակ իջնելով յանուն ազատութեան՝ նա քաշեց իր ետևից և աշխատաւոր մասսաներին։ Աւատական ու յարակից կարգերը չը դիմացան նրանց միացած գրոհին և խորտակուեցին։ Այդ կարգերի մնացորդները, այլ և այլ չափերով, յարատևեցին միայն յետամնաց երկրներում։

Ազատուած աւատականութեան կապանքներից՝ բուրժուազիան մի նոր դարագլուխ բաց արաւ համաշխարհային էւօլիւսիօնի մէջ, հսկայական թռիչք հաղորդեց մարդկային աշխատանքին, արդիւնագործութեան ու առևտրին։

Այդ բոլորը բուրժուազիայի պատմական դերի դրական կողմն է։ Սակայն խորտակելով աւատական իրաւակարգը, նոյն բուրժուազիան հաստատեց իր սեփական իշխանութիւնը։ Կեղեքման մենաշնորհը՝ վայրենի բիրտ ուժից անցաւ աւելի քաղաքակիրթ ոյժին—կապիտալին։

Մեծ ցեղափոխութեան հռչակաւոր նշանաբանները—ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն—որոնց համար աշխատաւորը չէր զլացել իր արիւնը թափելու, մնացին իբրև պատրանք նրա համար, իսկ բուրժուազիայի ձեռքին՝ իբրև միջոց գրաւած դիրքը ամրապնդելու։

Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի դեռ անձեռնմխելի էր մնում մասնաւոր սեփականութեան սկզբունքը, որ հիմնաքարն է հասարակական անհաւասարութեան։

*

Որքան աւելի է առաջադիմում տեխնիկան, որքան աւելի է զարգանում խոշոր մեքենային արդիւնագործութիւնը, այնքան աւելի է ուժեղանում ու ծաւալւում բուրժուազիայի տիրապետութիւնը։ Մանր արդիւնագործողները, նկարող լինելով դիմանալ մրցման, հետզհետէ զրկւում են իրենց աշխատանքի միջոցներից և խտացնում օրավարձով բանող սեփականազուրկների շարքերը։ Արդիւնագործութիւնը կենտրօնանում է։ Կապիտալը, հարստութիւնները ամբարւում են շահագործող փոքրամասնութեան ձեռքում, որը յենուած իր

նիւթական ուժի վրայ, իր ձեռքն առած քաղաքական դեկը—առաջադէմ երկրներում,—ձգտում է յաւերժացնել իր դիրքը, յարմարեցնել ամբողջ հասարակական կազմը իր դասակարգային շահերին, դնել իր յատուկ դրոշմը հասարակական բոլոր երևոյթների վրայ։

Միլիտարիզմի, կանգուն, մշտական զօրաբանակների միջոցով՝ նա ապահովում է ներսում իր տիրապետութիւնը, իսկ դրսում գրաւում է շուկաներ, իր ապրանքները արտահանելու համար։ Յաճախ արհեստական կերպով նա ոյժ է տալիս միլիտարիզմին՝ ազատ կապիտալների գործադրութեանը նոր ասպարէզներ բանալու նպատակով։

Շահագործելով ազգային, կրօնական ու պետական դաղափարները, նա միևնոյն ժամանակ կանգնում է միջազգային հողի վրայ և շահագործում է նաև միջազգային յարաբերութիւնները։

Տեխնիկայի հսկայական կատարելագործումները, ըստ երևոյթին, պիտի թեթևացնէին աշխատաւոր մարդու բեռը և նուազ աշխատանքի հետ համեմատաբար աւելի մեծ բաժին յատկացնէին նրան, բայց նրանք հակառակ հետևանքներ առաջացրին, շնորհիւ մասնաւոր տնտեսութեան սիստէմին։ Աշխատանքի մի խոշոր մասը մնում է անվճար, աշխատաւորը ստանում է բաշխման մօտէնտում իր արտադրած արժէքների չնչին մասը միայն։ Մեքենաների ներմուծման հետ հետզհետէ նուազեց աշխատաւոր ձեռքերի պահանջը, որոնք վաճառքի նիւթ են դարձած, իբրև շուկայի ապրանք։ Աշխատաւորի գործօն մասնակցութեան բաժինը արդիւնագործութեան մէջ միշտ աւելի և աւելի կրճատուեց։

Կենտրօնացնելով արդիւնագործութիւնը, սեփականազուրկ դարձնելով մանր արդիւնագործողներին, կապիտալիզմը քայքայման մատնեց աշխատաւորների ընտանիքները, գործարան քաշեց կանանց ու նոյնիսկ երեխաներին, մի հանգամանք, որ չէր կարող չը նպաստել բավարձի նուազման։

Չը նայած անսանձ շահագործումներին ու հարստահարութիւններին, նոյն աշխատաւոր ընդհանրութեան վզին են ընկած իրենց աւերիչ ծանրութեամբ՝ հարկերը, մաքսերը, մենավաճառումները, աքցիզները և յարաճուն միլիտարիզմի պատուհասը, որի էական նպատակն է ամուր կռել աշխատաւոր ժողովուրդների ստրկութեան շղթաները։

Ոչ պակաս աղէտաբեր է կապիտալիզմը աշխատաւոր դասակարգի համար՝ իր ներքին ճակատագրական հակասութիւններով։

Շնորհիւ մասնաւոր տնտեսութեան սիստէմին և գործատէրերի տենդային մրցակցութեան՝ կապիտալիստական արդիւնագործութիւնը անկարող է հաւասարակշռութիւն պահպանել պահանջի և առաջարկի միջև. դրանից առաջ է գալիս արդիւնագործական անարխիա, որի էական յատկանիշներն են՝ պարբերական տագնապներ, մասսային անաշխատութիւն, սնանկութիւններ, գոյութեան ընդհանուր անապահովութիւն և այլն։ Ստեղծւում է վիճակների մի ցայտուն հակապատկեր. մի կողմից՝ աշխատաւոր մասսաների մերկ, կիսաքաղց գոյութիւն, միւս կողմից՝ ամբարած առասպելական հարստութիւններ, որոնց մէջ լողում է արտօնաւորած փոքրամասնութիւնը և որոնք սակայն նոյն այդ աշխատաւորների ստեղծագործութիւնն են։ Այդպիսով բուրժուական հասարակութեան մէջ ծայրայեղ թշուառութիւնը առաջանում է հէնց ծայրայեղ առատութիւնից։

Կապիտալի կենտրօնացումը և նրա հետ կապւած աշխատաւոր խաւերի պրօլետարացումը (սեփականազուրկ դառնալը) տարբեր երկրներում կատարւում է տարբեր ոյժով ու չափերով, համաձայն այդ երկրների առանձնայատուկ—բնական, կուլտուրական, քաղաքական—պայմանների։ Այդ վերջինների շարքում առաջնակարգ տեղ է բռնում հողագործութեան զարգացման ծաւալն ու աստիճանը։

Գիւղական աշխարհում էւոլիւսիօնը տարբեր բնոյթ ունի։ Այնտեղ չի նկատւում հողի կենտրօնացումն։ Սակայն կապիտալիզմի բացասական ներգործութիւնը արտայայտւում է նաև այնտեղ՝ գիւղացիական այն տարրերի ճակատագրի վրայ, որոնք ապրում են իրենց սեփական աշխատանքի արդիւնքով, լինեն դրանք գիւղական պրօլետարներ, թէ իրենց մի կտոր հողի վրայ աշխատող գիւղացիներ։

Մինչդեռ արդիւնագործական, ինդուստրիական աշխարհում բանւորութիւնը շահագործւում է կապիտալիստների կողմից ուղղակի, անմիջական կերպով, գիւղում, բացի այն, որ տեղի ունի անուղղակի շահագործումն ապրանքների փոխանակութեան շրջանում, մենք տեսնում ենք նաև ուղղակի շահագործում հողատէրերի և գիւղական բուրժուազիայի կողմից՝ կապալի, օրավարձի և փոխատուութեան ձևով։

Այդ բոլորի շնորհիւ դասակարգային հակամարտութիւն առաջ է գալիս նաև գիւղում, ուր մի կողմը կանգնած է ձրիակեր-շահագործողների դասակարգը՝ հողատէրն ու բուրժուան, իսկ միւս կողմը՝ իր քրտինքով ապրող աշխատաւոր գիւղացիութիւնը։

Սրելով այդ երկու դասակարգերի յարաբերութիւնները, կապիտալիստական կարգերն անուղղակի ծանրանում են ուրեմն նաև աշխատաւոր գիւղացիութեան լայն խաւերի վրայ,—ծանրակշիռ հանգամանք մանաւանդ այն երկրներում, ուր գիւղացիութիւնը կազմում է ազգաբնակութեան գերակշռող տարրը։

Այդպիսով ոչ միայն արդիւնագործական պրօլետարիատը, այլ և աշխատաւոր գիւղացիութիւնը աւելի և աւելի դրւում են անհաշտելի հակառակութեան մէջ՝ տիրող բուրժուա-կապիտալիստական կարգերի հետ։

Տարբեր բնոյթ ունի երկու աշխարհներում նաև կապիտալիզմի շինարար դերը։ Արդիւնագործութեան, ինդուստրիայի աշխարհում կապիտալիզմը՝ համայնացնելով աշխատանքը, տալով բոլոր գործառնութիւնները վարձու աշխատաւորների ձեռքը, հեռացնելով կապիտալիստներին գործօն մասնակցութիւնից արդիւնագործութեան մէջ, նպաստելով պրօլետարիատի դասակարգային ինքնաճանաչութեան աճման ու կազմակերպման՝ դրանով իսկ նախապատրաստում է ապագայ սոցիալիստական հասարակութեան նիւթական և հոգեբանական խարիսխները, հարթում է նրա իրականացման ճանապարհը։

Այդպիսով, ինդուստրիական շրջանում, աշխատանքն արդէն համայնացած լինելով, սոցիալիզմի իրականացումը պահանջում է միայն արդիւնագործութեան միջոցների համայնացում, մինչդեռ գիւղական աշխարհում, ուր չի նկատւում հողերի կենտրոնացում՝ սոցիալիզմի իրականացման համար անհրաժեշտ է համայնացնել և՛ արդիւնաբերութեան միջոցները—հող, մեքենաներ և այլն,—և՛ աշխատանքը՝ կոոպերատիվ ձեռնարկների միջոցով։

*

Հասարակական ընդհանուր էւոլիւսիոնի այդ ընթացքը առաջ բերելով մրցում անհատ շահագործողների միջև, մրցում առանձին երկրների շահագործող դասակարգերի միջև, կռիւ դրամատէրերի և աշխատաւորների միջև, կռիւ յաճախ նոյնիսկ աշխատաւորական խմբումների միջև—պատճառ է դառնում մարդկային անչափ էներգիայի ապարդիւն վատնումին։ Բաժին տալով մարդկութեան մի մասին մաշող աշխատանքը, միւսին պարապ ու զարհամոլ կեանքը, մէկին թողնելով քայքայւել թշուառութիւնից, միւսին այլասերւել հարստութիւնից—նա դրանով իսկ հանդիսանում է զօրեղ խոչընդոտ մարդկային առաջադիմութեան գործում։

Կապիտալիզմի սնանկութիւնը ակներև է. կուլտուրական առաջադիմութեան դրօշակը իրաք անցել է արդէն աշխատաւոր դասակարգերի ձեռքը, որոնք հակադրւում են կապիտալիզմին՝ սոցիալիզմը։

Սոցիալիզմի վարդապետութեամբ առաջնորդւելով, աշխատաւոր դասակարգերը ձգտում են վերացնել կապիտալիստական մասնաւոր սեփականութիւնը և նրա հետ կապւած անարխիական արդիւնագործութեան սիստէմը, հասարակական ընդհանուր սեփականութիւն դարձնել աշխատանքի, արդիւնագործութեան միջոցները—հողը, հանքերը, գործարանները, հաղորդակցութեան ու փոխանակութեան միջոցները և այլն — և բովանդակ տնտեսութիւնը կազմակերպել ու ղեկավարել հաւաքականօրէն։

Այդ հսկայական յեղաշրջումը կը կատարւի յօգուտ ոչ միայն աշխատաւորների, այլ և բովանդակ մարդկութեան։ Բայց քանի որ նա հակասում է ունևոր, իշխող դասակարգերի անմիջական շահերին, ուստի աշխատաւոր ընդհանրութեան ազատագրումը կարող է էապէս կատարւել նոյն աշխատաւորների ձիգերով, նրանց հաւաքական կռւով։ Այդ կռւի մէջ միանում են, ձեռք-ձեռքի տալիս՝ քաղաքային արդիւնաբերական պրոլետարիատը, աշխատաւոր գիւղացիութիւնը և յեղափոխական ինտելիգենցիան։

Ինչպէս յաճախ դիտւել է պատմութեան ընթացքում, այսօր ևս ամենառաջադէմ հոսանքի՝ սոցիալիզմի կողմն են անցնում—երբեմն նոյնիսկ իշխող դասակարգերից—առաւելապէս գիտակից տարրերը, մտաւոր ու բարոյական հեղինակութիւնները, որոնք և ուժեղ աջակից են հանդիսանում աշխատաւոր ժողովրդի դատին, նրա վարած կռւին։

Այդ կռիւը մղւել է ամբողջ պատմութեան ընթացքում. հարստահարւած աշխատաւորութիւնը ըմբոստացել է յաճախ տիրող ռէժիմի դէմ, բայց անկազմակերպ, տարտամ վիճակում, առանց նպատակի պարզ գիտակցութեան և առաջնորդւելով ուրիշ տարրերից, ծառայելով գլխաւորապէս նրանց շահերին։ Միայն այն ժամանակ, երբ աշխատաւոր դասակարգերը իրենց արեամբ նւաճեցին քաղաքական և քաղաքացիական շատ թէ քիչ ընդարձակ իրաւունքներ, երբ նրանք ձեռք բերին հնարաւորութիւն՝ որոշ չափով օգտւելու քաղաքակրթութեան ընդհանուր հոսանքից—այն ժամանակից միայն նրանք սկսեցին իրենց սեփական քաղաքականութիւնն ունենալ. նրանց ձգտումները՝ մինչ այն անկերպարան՝ արտայայտւեցին դասակարգային շահերի ներհակութեան աւելի և աւելի յստակ գիտակցութեամբ, նրանց ըմբոստացումները՝ մինչ այն տարերային ու բաժան-բաժան՝ վերածւեցին կազմակերպւած ու սիստէմատիկ պայքարի, աշխատաւորական ուրոյն լօզունգներով։

Սոցիալիստական շարժումը իր էութեամբ միջազգային է։ Բոլոր երկրների աշխատաւոր տարրերը, իբրև միևնոյն տնտեսական սիստեմի զոհեր, պիտի միանան և արդէն միանում են համաշխարհային մի հզօր եղբայրակցութեան մէջ. ու գիտակ իրենց բարձր առաքելութեան, վստահ իրենց յաղթանակի վրայ, դիմում են կազմակերպւած կռւի ճանապարհով դէպի նոր, սոցիալիստական կարգերը։

*

Աշխատաւոր ընդհանրութեան կազմակերպող և միշտ աւելի աճող ոյժին՝ բուրժուազիան հակադրում է իր յստակ քաղաքականութիւնը, որը տարբերւում է, համաձայն միջավայրի պայմաններին։ Այն երկրներում, ուր նա գերիշխող է, ուր նրա ձեռքումն է քաղաքական ղեկը, նա բացարձակ կռիւ է մղում աշխատաւորական բանակի դէմ, միացնելով իր հետ բեկորները աւատական իշխանութեան, որի դէմ էր հանում նա մի ժամանակ նոյն աշխատաւոր մասսաներին։ Իսկ այն երկրներում, ուր աշխատաւորները սթափւել են կապիտալիզմի դեռ մատաղ հասակում և սկսել են իրենց կռիւը միաժամանակ շահագործման բոլոր ձևերի դէմ, բուրժուազիան, լինելով թշնամի և՛ միապետական ռէժիմին և՛ աշխատաւորական շարժման՝ մերթ խրախուսում է աշխատաւոր բանակը ընդդէմ միապետութեան, որի գոյութեամբ կաշկանդւած է տեսնում իր զարգացումը, մերթ թև է տալիս նոյն միապետութեան, երբ աշխատաւորների աջողութիւնները սպառնում են խախտել իր հիմնական դիրքերը։

Դասակարգային կռիւը բարդանում է մասնաւորապէս այն երկրներում, ուր գերիշխող ազգութեան ներկայացուցիչները, իրենց ձեռքն առնելով պետական և հասարակական բոլոր հաստատութիւնները, ճնշում են թոյլ ազգերին և առհասարակ փոքրամասնութիւն կազմող միութիւններին։

Զրկւելով հասարակական ու պետական կեանքին ակտիվ մասնակցելու հնարաւորութիւնից, տուժելով և նիւթապէս և կուլտուրապէս, այդ թոյլ միութիւնները յետ են մնում առաջադիմութեան ճանապարհի վրայ, և այդպիսով դանդաղում է համամարդկային կուլտուրայի հետ աշխատաւորի սոցիալական ազատագրութիւնը, քանի որ այդպիսով խոչընդոտ է դրւում մի կողմից՝ դասակարգային հակամարտութեան զարգացմանը ճնշւած ազգութիւնների մէջ, միւս կողմից՝ ճնշող ու

ճնշող ազգերին պատկանող աշխատաւոր դասակարգերի համերաշխութեանը։

Փոքրիկ, նուաճուած կուլտուրական միութիւնների մէջ աշխատաւոր տարրերը, կռուելով հանդերձ իրենց ցեղակից բուրժուազիայի դէմ, միևնոյն ժամանակ նախանձախնդիր են իրենց ուրոյն ազգային կուլտուրայի, որը ստեղծել է ժողովրդական առանձնայատուկ հոգեբանութիւն։

Ազգային ճնշումների դէմ մղող կռիւը աւելի յամառ ու յաղթանակող է դառնում՝ շնորհիւ այն հանգամանքի, որ այժմ այդ կուլտուրայի ներկայացուցիչները միայն ազգի „վերին“ խաւերը չեն. ազգային կուլտուրան թափանցում է ժողովրդական լայն մասսաների մէջ ու դառնում նրանց սեփականութիւնը և առաջադիմութեան միջոց։ Ժողովրդական մասսաները իրենց իներտ դրութիւնից գիտակից կեանքի ասպարէզ նետուելով, երևան են հանում թագնուած ուժեր՝ կուլտուրական-հասարակական աշխարհում։

Փափագելով հանդերձ ոչնչացնել բոլոր սահմաններն ու խտրութիւնները ազգերի միջև, ձգտելով հանդերձ կազմակերպել մէկ, ներդաշնակ, ամբողջական մարդկութիւն, ի տեղի այսօրուայ կտրատուած, բաժան-բաժան ու հակամարտ աշխարհի, սոցիալիզմի իրականացումը չի պահանջում այժմեան ուրոյն ազգայնական միութիւնների խպառ ձուլումը. միութիւններ, որոնք իրենց պատմականօրէն ժառանգած բեղմնաւոր առանձնայատկութիւններով կարող են միայն հարստացնել ապագայ սոցիալիստական մարդկութիւնը։

*

Աշխատաւոր դասակարգերի կռիւը յանուն սոցիալիզմի առաջ է տարուում բոլոր հնարաւոր միջոցներով, —տնտեսական և քաղաքական հողի վրայ։ Օգտուելով խոշոր տնտեսութեան ներկայացրած առաւելութիւններից, գործարանական բանուորները ձգտում են կազմակերպուել, առաջ տանել տնտեսութեան բոլոր բարդ գործառնութիւնները միմիայն իրենց ոյժերով և իրականացնել դեռ ներկայ կարգերում,—կօօպերասիոնների, արդիւնաբերող ու սպառող ընկերակցութիւնների միջոցով—համայնական սեփականատիրութեան ու տնտեսութեան մի քանի ձևերը։

Կօօպերատիվ աշխատանքը տարածուում է նաև գիւղական աշխարհում, ուր միևնոյն ժամանակ կատարելագործուում են արդէն վաղուց գոյութիւն ունեցող համայնական սեփականատիրութեան ու աշխատանքի տեսակները։ Կօօպերասիոնները ոչ միայն միջոց են որոշ չափով ապահովելու աշխատաւորների առօրեայ շահերը, այլև ճանապարհ՝ գործնականապէս համայնական ոգով դաստիարակելու աշխատաւորներին, պատրաստելու նրանց ապագայ սոցիալական կազմակերպութեան համար։

Աշխատաւորական կուսակցութիւնները միւս կողմից անդադար կռիւ են մղում քաղաքական հողի վրայ, քանի որ տիրող անհաւասարութիւնը պահպանուում է գլխաւորապէս բուրժուազիայի քաղաքական գերիշխանութեամբ։

Օգտուելով անցեալի փորձերից և իրենց յարաճուն ազդեցութիւնից, նրանք պատրաստուում են ձեռք ձգելու քաղաքական ղեկը, որպէսզի ստեղծեն նպաստաւոր պայմաններ իրենց սոցիալական իդէալի իրագործման համար, —ռամկավարացնել ամենալայն չափերով քաղաքական կազմակերպութիւնը, վերածել պետութիւնները դաշնակցական-ռամկավար հանրապետութիւնների, ապակենտրօնացման ամենաընդարձակ հիմքերի վրայ և իրագործել էքսպրօպրիացիայի (արտագրաւում) միջոցով սոցիալիստական կարգերը։

Սոցիալիզմը կը հաւաքէ իր դրօշակի տակ ամբողջ տառապող մարդկութիւնը, կռուելու համար միջազգայնօրէն կազմակերպուած շահագործման ու բռնակալութեան դէմ։

Նա կը հարթէ ճանապարհը դէպի անհատի և հասարակական միութիւնների ազատ, բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը. նա հրապարակ կը հանէ այն բոլոր դրական ուժերը, որոնք թագնուած են մնում այլ և այլ ձևերով արտայայտուող ճնշումների տակ։

Նա կը խորտակէ այն բոլոր անջրպետները, որոնք շերտաւորում են ժամանակակից հասարակութիւնը, բաժանելով նրան հպատակ ու հակամարտ, թշնամացած դասակարգերի։

Նա վերջ կը դնէ շահագործման բոլոր յայտնի ու դիմակաւորուած ձևերին. կը միացնէ բոլոր ժողովուրդները մի հոյակապ դաշնակցութեան մէջ, խաղաղ աշխատակցութեան հողի վրայ. նա կ'առաջնորդէ դէպի իսկական թագաւորութիւնը „ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան“։

Եւ այդ իդէալը բոլոր տանջածների ու հալածածների՝ չի ներկայանում մեզ՝ իբրև մի անհող, անխարիսխ ցնորք, այլ միանգամայն իրագործելի մի հնարաւորութիւն, որովհետև նա ոչ միայն բղխում է իրերի օբեկտիվ, տարերային ընթացքից, այլև թելադրուում է հրամայականօրէն՝ պատմութիւնը առաջ շարժող մասսաների ու անհատների կամքից, խղճից ու բանականութիւնից։

Պատմութեան օբեկտիվ և սուբեկտիվ ստեղծագործող ուժերի զուգաւորման մէջն է գրաւակաները այն անտարակուսելի յաղթանակի, որ պիտի տանէ աշխատաւոր մարդկութիւնը ընդդէմ թէ՛ բնութեան կոյր ուժերի և թէ՛ հասարակութեան մէջ դարերով թագաւորող ստրկութեան ու անարդարութեան։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Երկրորդ Նամակ

Մեր առաջին նամակում արդէն ասուած էր, որ աշխատաւոր ժողովուրդը իր վրայ ծանրացած տնտեսական և քաղաքական ստրկութիւնից կատարելապէս կազատուի միայն այն կարգերի ժամանակ, որոնք կոչւում են սոցիալիստական։ Սակայն դէպի սոցիալիզմը տանող ճանապարհին, անհրաժեշտ է իրականացնել մեր հասարակութեան աշխատաւոր դասի կեանքը թեթևացընող մի շարք բարեփոխութիւններ։ Ահա հէնց այդ բարեփոխութիւնների մասին և կը լինի մեր խօսքը այժմ։ Ներկայ նամակի մէջ մենք կը սահմանափակուենք քննելով միայն այն ըէֆօրմները, որոնք վերաբերում են քա-

զաքային պրոլետարիատի վիճակին—այն է գործարանային և արդիւնահանող բանւորներին։

*

Նրանց բոլորի վրին կրկնակի լուծ կայ դրած։ Նրանք բոլորն էլ տառապում են „տէրերի“ իշխանութիւնից և կառավարութեան կամայականութիւնից։ „Տէրերը“ անխնայ շահագործում են բանւորներին և կառավարութիւնն էլ ոչ միայն չի պաշտպանում նրանց, այլ ընդհակառակը՝ ամեն կերպ օգնում է „տէրերին“՝ կողոպտել և ճնշել բանւորներին։ Նոր օրէնքները պէտք է իրենց պաշտպանութեան տակ առնեն չունևոր աշխատաւորներին և ահա թէ ի՛նչ եղանակով պիտի արտայայտւի այդ պաշտպանութիւնը։

Պրոլետարի աշխատանքը նրա ուժից վեր է։ Այդ աշխատանքը վաղաժամ խորտակում է աշխատաւորի հոգին և առողջութիւնը։ Բանւորը աշխատանքին տալիս է օրական 12—15, երբեմն նաև 20 ժամ։ Զարմանալի չէ ուրեմն, որ շնորհիւ բանւորական այդքան մեծ աշխատանքի, պրոլետարի կեանքը մեծ մասամբ հասնում է ոչնչութեան։ Նա չունի ոչ ուրախութիւն և ոչ իմաստ—մարդը դառնում է աշխատող մեքենայ, ապրում է բանելու համար և բանում է առանց մէջքը շտկելու և մէջքը չի շտկում նրա՛ համար միայն, որ ապրի։ Ստացւում է այդպիսով մի անտանելի, բանական արարածի համար՝ վիրաւորական, անել վիճակ։

Այդպէս չը պիտի լինի։ Օրական ութ ժամ աշխատանք—Ահա բանւորական օրի ամենամեծ ժամանակը։ Եւ այդ իհարկէ միայն այնպիսի աշխատանքների համար, որոնք այնքան էլ չեն յոգնեցնում և մաշում բանւորի առողջութիւնը։ Բայց այնտեղ, ուր հասակաւոր բանւորները—սկսած տարեկան հասակից—կարող են՝ առանց իրենց առողջութեանը առանձնապէս վնասելու՝ աշխատել օրէնը ութ ժամ—այնտե՛ղ այդ վեր է արդէն ղեռահասների ուժից։ Ահա թէ ինչու պէտք է հարկադրել, որ պատանի բանւորները,որ 16—18 տարեկան են, աշխատին օրէնը 6 ժամից ոչ աւելի։ Իսկ ինչ վերաբերում է այնպիսիներին, որոնց 16 տարին էլ չի լրացել, ապա նրանց տեղը գործարանը չէ այլ՝ դպրոցը։ Նրանց հարկաւոր է ամրապնդել իրենց առողջութիւնը և ձեռք բերել օգտակար գիտելիքներ և ոչ թէ մատաղ տարիներից սկսած իրենց յոգնեցնել ծանր աշխատանքով։

Օրական ութ ժամեայ աշխատանքից դժգոհ տէր—կապիտալիստները կարող են խօսքը մէկ անել իրենց մէջ և համապատասխան կերպով պակասեցնել աշխատավարձը. „կուզէք, կասեն, աշխատեցէք քիչ վարձադրութեամբ, չէք ուզում՝—բարի՛ եկաք, մենք փակում ենք գործարանները“։

Այո՛, կարող են... Մի անգամ չէ, որ այդ պատահել է, և կը պատահի դարձեալ. յիշեցէք հէնց միայն վերջի ժամանակների „լակաուտները“, տէրերի այդ հռչակաւոր գաղտնի համաձայնութիւնները և գործադուլները...

Եւ ահա, տէրերի այդ տեսակ բռնադատութիւնից խուսափելու համար պէտք է, որ ութ ժամ բանւորական օրւայ հետ միասին մտցնի մի այլ օրէնք—մի օրէնք, որով ոչ մի տէր իրաւունք չունի բանւորին որոշեալ չափից պակաս վարձ նշանակելու։ Դա հէնց աշխատավարձի մինիմումի այն օրէնքն է, որը իբրև պարտադիր և անյետաձգելի՝ շեշտած է Դաշնակցութեան միւնիմում—ծրագրի մէջ։

Վաղուց արդէն զանազան երկրների բանւորները ուզում են ձեռք բերել այդ օրէնքը։ Ցաճախ նրանք արիւն են թափել դրա համար։ Այսպէս, դեռ 75 տարի առաջ, ֆրանսիական բանւորները, տառապած, սովալլուկ, ղէնքը ձեռին դուրս եկան փողոցները՝ պահանջելով, որ կառավարութիւնը իրենց ապահովէ տէրերի կամայականութիւնից։ Այն ժամանակ, այդ մռայլ արիւնալի օրերին, ֆրանսիական բանւորների ռազմական դրօշի վրայ գծուած էին այս խորիմաստ բառերը. „Ապրել աշխատանքի մէջ, կամ մեռնիլ կռւում“։ Եւ նրանք մեռան, ու այնպէս էլ ձեռք չը բերին աշխատավարձի միւնիմումի օրէնքը։ Ժամ է սակայն վերջ դնելու տէրերի բացարձակ իշխանութեանը, որ գործ են դնում բանւորների գլխին։ Ժամ է պարտաւորեցնել գործարանատէրերին՝ որ աշխատավարձը չիջեցնեն օրէնքով հաստատուած մինիմումից։ Դա իրագործելի է։ Աւստրալիայում, մի քանի տեղեր այդ օրէնքը արդէն գոյութիւն ունի։ Այդ ձեռք են բերել նաև Շվեյցարիայում՝ Ցիւրիխ կանտոնի բանւորները։ Այդ միևնոյն իրաւունքը պէտք է ձեռք բերեն նաև բոլոր երկրների բանւորները։

Ըստ ինքեան հասկանալի է, որ տարբեր արդիւնագործութեան մէջ, տարբեր էլ պիտի լինի և աշխատավարձի մինիմումը, համաձայն աշխատանքի բարդութեան և դժուարութեան։ Սակայն դա դեռ բոլորը չէ։

Ի՞նչ է նշանակում „նւազագոյն աշխատավարձ“։ Նւազագոյն ի՞նչ մտքով։

Նւազագոյն այն մտքով, որ այդ վարձով ամեն մի բանւոր կարող լինի տանելի կերպով ապրել, ունենալ կեանքի բոլոր անհրաժեշտ պիտոյքները—բնակարան, սընունդ, հագուստ և այլն։ Սակայն յայտնի է, որ մարդուն անհրաժեշտ պիտոյքների գինը երբեմն բարձրանում է, երբեմն իջնում՝ կախուած լինելով տնտեսական կեանքից ընդհանրապէս և շուկայի պայմաններից մասնաւորապէս։ Դրա համաձայն, այսինքն, համաձայն անհրաժեշտ պիտոյքների գների՝ պէտք է նա՛և բարձրանայ կամ իջնի՝ օրէնքով հաստատուած աշխատավարձի մինիմումը...

*

Արդիւնաբերութեան զարգացումը դուրս բերեց բանւորական շուկան կանանց մի ամբողջ բանակ—պրոլետար ընտանիքներից։ Տէրերը ուրախացան աշխատող ձեռքերի այդ նոր հոսանքից։ Նրանք սկսեցին կանանց աշխատանքը գնել աւելի էժան, քան առաջ գնում էին տղամարդկանց աշխատանքը։ Իսկ այդ հանգամանքը իր հետ բերեց աշխատավարձի պակասացում նաև տղամարդկանց համար։ Չէ որ բանւորական ուժը նոյն է ինչ որ շուկայի ապրանք.—ինչքան շատ լինի այդ ապրանքը, այնքան էլ էժան կը լինի նրա գինը, որքան աւելի են աշխատանք որոնող „ազատ ձեռքերը“, այնքան էլ պակաս է նրանց վարձը։ Զարմանալի չէ ուրեմն որ իրենց կաշւի վրայ փորձելով այդ կանոնի ճշդութիւնը, բանւորները իսկոյն բողոքեցին՝ արհեստանոցներում կանանց ընդունելու դէմ։ Բայց այդ բողոքից բան դուրս չեկաւ և չէր էլ կարող դուրս գալ։ Կանայք գալիս լցւում են գործարան-

ներն ու արհեստանոցները և չես կարող նրանց այնտեղից հեռացնել։ Ուրեմն այդ վտանգից պէտք է դուրս գալ մի ուրիշ կերպ։

Առաջին գործը պիտի լինի՝ իրականացնել ութ ժամ բանուորական օրէայ և աշխատավարձի մինիմումի օրէնքները, ի հարկէ տարածելով այդ օրէնքները նաև կանանց աշխատանքի վրայ։ Բայց այդ դեռ քիչ է։ Հարկաւոր է օրէնդրական ճանապարհով սահմանել նաև մի շատ կարևոր կանոն, որի համաձայն տէրերը պարտաւոր լինեն կանանց էլ նոյնքան վճարել, որքան որ միևնոյն գործի համար վճարում են տղամարդոց։ Միայն ա՛յդ պայմաններում՝ կնոջ աշխատանքը կը ծառայէ բանուոր ընտանիքի օգտին։

Օրէնքը պարտաւոր է դէպի աշխատաւորները հոգատարութիւն ցոյց տալ նաև մի ուրիշ կողմից։ Քաջ յայտնի է, որ կինը տղամարդուց ընդհանրապէս աւելի թոյլ է։ Գործարանական աշխատանքը արագ մաշում է կնոջ առողջութիւնը—աւելի ևս՝ երբ նա աշխատում է այն ժամանակ երբ բոլորովին չը պիտի աշխատի, օրինակ՝ յղիութեան վերջին և ծննդաբերութեան առաջին շաբաթներում։ Ահա թէ ինչու պէտք է կանանց յանձնել այնպիսի աշխատանք, որ համապատասխան լինի նրանց ֆիզիքական կազմուածքին, և ահա թէ ինչու՝ պէտք է տէրերին պարտաւորեցնել, որ նրանք կանանց ազատեն աշխատելուց՝—ի հարկէ ռոճիկը պահպանելով՝—ծննդաբերութիւնից առաջ և յետոյ մի քանի շաբաթ...

Ցաճախ գործարանի տէրերը իրենց ծախսերը կրճատելու նպատակով՝ օտար երկրներից են բանուորներ բերել տալիս։ Դիմելով օտար երկրացի բանուորի օգնութեան՝ նրանք եռակի անարդարութիւն են գործում.—նախ, որ անգործ են թողնում իրենց երկրի բանուորների մի մասը, երկրորդ՝ պակասեցնում են այն բանուորների աշխատավարձը, որոնց ձեռքից գործը դեռ չեն խլել—պակասեցնում են, որովհետև տեղացի բանուորները բոլորովին անգործ մնալու ահից՝ կամայ-ակամայ համաձայնում են պակաս վարձատրութեան. երրորդ, սոսկալի կերպով շահագործում են եկեւոր բանուորներին՝ օգտուելով նրանից, որ վերջիններս ինչպէս օտար երկրացի՝ ոչ տեղական լեզուն գիտեն և ոչ էլ աշխատանքի վարձագինը, ուստի և համաձայնում են աշխատել օրէնը այնքան ժամ, որքան պահանջում են տէրերը և ստանալ այն վարձը, որ նշանակում են դարձեա՛լ տէրերը։

Այս բոլորն իմանալով՝ դժուար չէ եզրակացնել թէ ինչու այս կամ այն երկրի բանուորները անբարեցակամ՝ և երբեմն էլ նոյնիսկ թշնամական վերաբերմունք են ցոյց տալիս նորեկ ընկերներին, երբ նրանք գալիս են գործ որոնելու։ Այդ գժտութիւնը, և աւելի՛ ևս թշնամութիւնը թէ՛ անարդար է և թէ ըստ էութեան անխելացի։ Բոլոր երկրների բանուորները—իրենց կարիքի և դժբախտութեան մէջ՝ ընկերներ են։ Նրանց բոլորի ընդհանուր թշնամին միևնոյն է—դա կապիտալիստներն են և նրանց պաշտպանները։ Բոլոր բանուորների ընդհանուր վերջնական նպատակը միևնոյն է—այն է, արմատից ոչնչացնել այն հիմքերը, որոնց վրայ հաստատուած է ներկայ կապիտալիստական պետութիւնը։ Նրանք բոլորն էլ ունին իրենց հերթական մի շարք ընդհանուր ամենամերձաւոր խնդիրները։ Այդ ամենամերձաւոր խնդիրների շարքում ի միջի այլոց, կայ նաև այն պահանջը, որ օրէնքը տէրերին պարտաւորեցնի օտարերկրացի բանուորներին վարձատրել այնքան, որքան ստանում են տեղացի բանուորները։ Օրէնքը—արդար և խելացի օրէնքը—պարտաւոր է պաշտպանել նաև այն բանուորներին, որոնք կարիքից ըստիպուած՝ ընկել են օտար երկիրներ։ Այս կերպ միայն կարելի է ապահովել տեղացի բանուորներին այն անարդարութիւններից, որ գործում են տէրերը՝ իրենց գործարանն ընդունելով օտարերկրացիներին...։

*

Հարստութիւն դիզելու ագահութիւն և դէպի բանուորները ունեցած յանցաւոր անփութութիւն—ահա՛ որոնք են համարեա բոլոր տէրերի բնորոշ գծերը։ Այդ երեւում է ամեն մի քայլափոխում։ Արդեօք շա՞տ կը գտնէք մեզանում այնպիսի գործարաններ, ուր աշխատող մարդկանց համար բաւական օդ և լոյս լինէր։ Մի՞թէ շատ են մեր երկրում այն արդիւնահանքերը, ուր բանուորների համար քիչ-շատ տանելի բնակարաններ լինեն։ Սովորաբար, գործարանների բանուորական օթեւաններն ու կացարանները կարծես դիտմամբ այնպէս են լինում շինած, որ մարդիկ նրանց մէջ խեղդուեն փոշուց, գարշահոտութիւնից և խեղդուկ ծանր օդից։ Եւ բանուորների բնակարանները—մենք տեսել ենք այդպիսիները Բագուում—յաճախ յիշեցնում են խոնաւ ու ցեխոտ խոզաբներ, ուր մարդիկ միմեանց վրայ թափուած խեղդուում են... Մի՞թէ կարելի է այդ պայմաններում առողջութիւն պահպանել։ Եւ մի՞թէ զարմանալի է, որ բանուորների շարքերը լի են նուազ, ուժասպառ, հիւծուած մարդկանցով—մարդիկ՝ հիւանդ թոքերով, մարդիկ՝ որ տառապում են յօդացաւից, ծիւրախտից, սրտի հիւանդութիւններից և այլն։ Իսկ եթէ դրան աւելացնենք և այն, որ շատ գործարաններում ու արհեստանոցներում կամ բոլորովին չը կայ ֆելդշեր կամ բժիշկ և կամ բժշկական օգնութիւնը լինում է անկանոն կերպով՝ ապա մեր առաջ հանդէս է գալիս դարձեալ մի այլ կարևոր խնդիր, որի վճիռը պատկանում է բանուորական նոր օրէնսդրութեան։ Դա բանուորների առողջապահութեան հարցն է։

Մենք թուեցինք մի շարք օրէնսդրական միջոցներ, որ հասարակութիւնը պէտք է ձեռնարկէ բանուորների վիճակը բարելաւելու համար։ Այդ միջոցները կարող են ձևակերպուիլ հետևեալ կերպով.

ա) Բանուորական օրը պիտի տևէ 8 ժամից ոչ աւելի։

բ) Դպրոցական հասակի դեռահասները (մինչև 16 տարեկան) չը պիտի ընդունուեն գործարանների և արհեստանոցների մէջ՝ աշխատելու համար։

գ) Դեռահասների բանուորական օրը (16-ից 18 տարեկան) պիտի տևէ 6 ժամից ոչ աւելի։

դ) Տէրերը իրաւունք չը պիտի ունենան բանուորներին վճարել օրէնքով սահմանած գնից պակաս։

ե) Կանայք տղամարդկանց հաւասար պայմանների մէջ՝ պիտի ստանան միևնոյն վարձը, ինչ ստանում են տղամարդիկ։

զ) Կանայք պիտի ազատուին աշխատանքից մի քանի շաբաթ ծննդաբերութիւնից առաջ և յետոյ, չը փոխելով նրանց ռոճիկը։

է) Օտարերկրացի բանուորները պիտի վայելեն նոյն

օրէնքների պաշտպանութիւնը, որոնք սահմանուած են տեղացի բանուորների համար։

ը) Օրէնքով պիտի սահմանուի խիստ հսկողութիւն առողջապահութեան և սանիտարական պայմանների վրայ՝ գործարաններում և արհեստանոցներում։

Քաղաքային պրոլետարիատի շահերի տեսակէտից, ուրիշ ո՛չ-պակաս կարևոր ըէֆորմների մասին կը խօսենք հետևեալ անգամ։

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԲՈՂՈՔԻ ՉԱՅՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Վասպուրականի մեր Կենդրոնական կոմիտէն հրատարակել է թիւրքերէն եւ հայերէն լեզուով մի թռուցիկ, որն առաջ եկաւ բերում մի քանի կրճատումներով։

Թո՛ղ մի անգամ էլ աւելորդ անգամ հաստատուի այն ճշմարտութիւնը, թէ բռնակալութիւնը՝ որքան էլ դաժան լինի և հրեշաւոր, որքան էլ սիստեմատիկ լինի և դիւային, որքան էլ ոճիրների շարքեր. արեան ու արցունքի լճեր ղոյացնէ, այնուամենայնիւ չի կարող կասեցնել այն ազատագրար շարժումը, որ բղխում է ժողովուրդների հոգուց, նրա կեանքի կարիքից և առաջ մղում տարերային ուժով։

Մեզ մոտ շատ են եկել առասպելական մեծութեան հասած արիւնարբու հրեշներ՝ իրենց ցինիկ հայրական խնամքը մեր վրայ տարածելու։ Մենք շատ ենք տեսել բռնակալութեան մռայլ որջերի մէջ իրենց արհեստը կատարելագործած արիւնախում դահիճներ։ Բայց մենք դեռ կանգուն ենք անսասան։

Վեց ամիս է, ինչ մի նոր հրեշի սակրացած ձեռքն է բարձրացել Վասպուրականի ամբողջ ժողովրդի վրայ։ Վեց ամիս է ինչ Ջիա-բէյի տան մենաւորը՝ անառակութեան և ցոփութեան մէջ յղփացած, իր շնական երևակայութեան մէջ պատրաստում է նոր հաւածներ մեկը միւսից սոսկալի ու գազանային։

Բայց միշտ էլ ունայն...

Եւ ամեն մի դատարկ փորձից յետոյ աւելի է կատաղում նա. խելագար գլուխը թափահարում է, ոտները գետնին է զարնում, գոռում ու գոչում դատարկ սենեակներ չափելով. պաշտօնեաներ պատժում, պաշտօնանկ անում, աքսորում, նորեր նշանակում...

Դարձեալ ունայն... Ու այդ բոլոր փորձերից ամենամեծ վնասողը ինքը Ալի-բէկը եղաւ ու իր կառավարութիւնը։ Օրինակներ՝

1) Ամբողջ քաղաքը գիշերները ժամ կէսից յետոյ զինուորական գրութեան պաշարման վիճակի մէջ դրաւ։ Արդիւնքը—զինուորականութիւնը գրգռեց իր դէմ և մի քանի խղճուկ՝ լապտերներով շրջող մարդիկ ձերբակալեց։

2) Ամենաչնչին պատրուակներով անմեղ մարդիկ բանտերը լցրեց և ապօրինի կերպով երկար պահելէ յետոյ, ոմանց թող տուաւ իսկ շատերին դեռ պահում է։ Արդիւնքը—մինչև այդ ժամանակ բոլորովին անտարբեր մարդիկ տիրող կառավարութեան դէմ դուրս եկան զայրոյթի և վրէժի զգացումով լեցուած։

3) Պաշտօնապէս ժողովուրդը կողոպտեց ու թալանեց բախիէի անուան տակ։ Արդիւնքը—կառավարութեան գանձը քանի գնում աւելի ու աւելի դատարկւում է. նիւթականը քայքայւում է։ Փա՞ստ—մէկն էլ բաւական է, փողոցից անցնող խեղճ զինուորների հագուստներին նայեցէք։

4) Պետական անհրաժեշտ պէտքի համար համիտիէներից քանի մ՝ալայներ պիտի կազմէին. ռէդիֆներ պիտի ժողվէին. հրամանը ստիպողական էր, ձեռնարկեցին բայց գլուխ չեկաւ։ Դրամ շատ կար երևի !! Արդիւնքը—ժողովրդին աւելի զզուեցրեց, թէ թիւրք, թէ քիւրդ և թէ հայ էլ աւելի յեղափոխականացրեց։

5) Քիւրդերի հետ ուզեց նոյն խստութեամբ վարուել, ինչպէս հայերի։ Արդիւնքը.—Միւշիրի հետ ընդհարուեցաւ, ազդարարութիւն ու յանդիմանութիւն ստացաւ... Իսկ քիւրդ աղաներից մի՞միայն արհամարանք...

6) Հայ յեղափոխականներին հետապնդեց, ահագին զօրք և թնդանօթ շարժման մէջ դնելով։ Արդիւնք.—Աղթամարի և Վարագի խայտառակութիւնները...

Գաղտնի մեքենայութիւններով ուզեց թիւրք ամբոխը հայերի դէմ դրգռել, ընդհարումներ առաջացնել երկու հարևան ժողովուրդների միջև։ Արդիւնքը.—շատ էր ուշացել... փորձը հակառակ արդիւնքներ տուաւ, մեր դրացի թիւրք ժողովուրդն էլ էր սկսել գիտակցել, նա էլ վերջապէս զգաց, որ ապիկար, բախտախնդիր ու սինլքոր պաշտօնեաների շնորհիւն է ինքը աղքատութեան ճիրաններում տառապում. իսկ պետութիւնը տակաւ առ տակաւ դէպի անկում է դիմում։ Եւ փոխանակ ընդհարումների՝ եղբայրական ձեռներ մերձեցին իրար...

7) Լրտեսութեան նոր մէթոտներ հնարեց՝ բարձր դիրքի տէր մարդիկ պաշտօնի կանչեց, գաղտնի հրահանգներով յեղափոխականների հետ յարաբերութեան մէջ դրաւ՝ իբրև նրանց բարեկամ։ Կարնից Վան ղրկուած նամակներ ու սուրհանդակներ բռնեց, մարդիկ ձերբակալեց, 3 և կէս տարի հիւքմ տուաւ։ Արդիւնք.—առաջին անգամ Վանի բանտը թիւրք քաղաքական յանցաւոր ունեցաւ...

Եւ ուրիշ էլի շատ բաներ արաւ, բայց ոչինչ չը ստացաւ, և աւելի նպաստեց դժգոհութեան ուժեղանալուն, աւելի ու աւելի լայն հոսանքներով առաջ ընթանալուն և գուցէ յաստմի փոխելուն...

Մենք գոհ ենք.. Իսկ դո՞ւք...

Եւ ոգևորուած ապագայի աւելի ու աւելի յաղթանակով գոչում ենք՝

Հալածուածներ և ճնշուածներ բոլոր ազգերի միացէ՛ք։

Բռնապետութիւնը ինքն է փորում իր հիմքերը... Թո՛ղ կորչի՛ այդ բռնապետութիւնը։

Կեցցէ Օսմանեան բոլոր ժողովուրդների ու ազգերի սերտ միութիւնը։

Կեցցէ՛ սահմանադիր ժողովը։

ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ՇՐՋԱՆԸ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ, յուլիս 20

Գաղթականութիւնը օրէօր կը ծաւալի այս կողմի հայերուն մէջ, ապրուստի դժուարութեան և կեանքի անապահովութեան պատճառով. կառավարութիւնը տեսնելով գաղթականութեան այս յուսահատ տենչը հայուն մէջ, անցագիրը 10—30 լիրայի կը ծախէ, հայերը ունեցած չունեցածնին կը ծախեն անիծեալ թուղթի կտորը ձեռք ձգելու համար։ Բայց ատով չի վերջանար. ճանապարհին թիւրք պաշտօնեաները չեն թողուր որ հայերը խաղաղ շարունակեն մինչև որ յետին ստակը չը կողոպտեն։ Կարողը կը գաղթէ, անկարողը հոգին սեղմած կսպասէ։

Ցուրքերը աւելի ու աւելի կը ծանրանան հայ ժողովրդի վրայ, ժողովուրդը սարսափելիօրէն կաղքատնայ։

Անցածները քաղաքիս հարուստ հայերէն քանի մը տուն կրօնափոխ եղան, ազգին վրայ բարդուած պագիէներու պատճառով իւրաքանչիւրը մէկ-երկու հարիւր ղուրուշ աւելի չը վճարելու համար։

Կըսուի թէ քաղաքիս թիւրք երևելի աղաները խընդ-

բագիր տուած են Դրան, որպէսզի Պաղտատի գիծը ասկէ անցնի կամ ճիւղ մը կցի։

Մարտ 1-ին սուլթանի ֆէրմանը կարդացուեցաւ ի ներկայութեան վալիին և խառն հասարակութեան։ Այդ ֆէրմանը կը ծանուցանէր զինուորական ծառայութեան 9-էն 7 տարիի, իսկ Մէքքէ գացողներունը, որ 7 է, 5-ի իջնալը։ Ֆէրմանը կը ծանուցանէր նաև թէ քէթիֆներու պագիէները ա՛ֆ եղած են։ Այս բանը թէև երկու տարի առաջ ծանուցուած էր բայց կառավարութիւնը դարձեալ թքածը կլլեց և հաւաքեց։

Սուլթանի իրադէով մարդահամարը նորէն պիտի նորոգի՝ անխտիր, բոլոր քրիստոնեաները խ ը ր ի ս թ ի ա ն պիտի նշանակին իրենց անցագիրներու մէջ, մ ի լ լ է թ պիտի չ ը լ լ ա յ։ Ամէն պարագայի մէջ հայուն կեանքն է որ վտանգի մէջ է, թէ հոս թէ գեղրանքը։

Դատաւոր և դատախազ ոչ թէ արդարութեան, այլ կաշառակերութեան սանձարձակ օրէնքը կը գործադրեն։ Շատ չարագործներ, վաշխառուներ, աւազակներ կաշառքով կազատուին, պատուհաս դառնալով ժողովրդին։

Քանի մը շաբաթ առաջ երկու թիւրք սրիկաներ հայ աղջիկայ մը ոսկեղէն մանեակը բռնի խլեցին, ուրիշ զաղա քիւրդ մը քաղաքին մէջտեղը մշեցի երիտասարդի մը գօտին մէջքէն գողցաւ, խընդրը կեռվուր ըսելով, ոչ մէկ պաշտպանութիւն դէպի հայերը։

Այստեղ եկան վերջերս 150 տուն աղքատ և բաղցած մշեցիներ, որոնք տունտեղ զուլումին ու պարտատէրերուն թողլով, լալով դուրս եկած են հայրենիքէն։ Կառավարութիւնը անոնց տեղ չէրքէզներ կը տեղաւորէ. մխիթարական ոչինչ։

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՕՆԷՆ

30 Յուլիս

Տ ա ր ք ե ր.—Արդէն յայտնի է թէ մարտ ամսոյ մէջ կառավարութիւնը բաշխեց նորահաստատ „վերկիի շախսին“ և „Հայվանաթը էհլիյէի“ տուրքը, ինչպէս և քրիստոնէից զինուորական տուրքի „քէթիֆները“։ Վերկիի շախսին և անասուններու տուրքին բաշխուիլը կը պարտինք Կարնոյ թիւրք և Տէպրէի առնաւուտ տարրերուն կողմէ, այս մասին յարուցած շարժումներուն. սակայն քանի որ գանձը բաց ունէր, հարկ էր մի կերպ գոցել զայն, ասոր համար կառավարութիւնը նոր խորամանկութեան մը դիմեց, առանց նոր տուրք մը հաստատած ըլլալը նկատելու, արդէն շատ տարիներէ իվեր գանձուած թէմեթթուի (վաստակի) տուրքին քանակը անհամեմատ աւելցուց, սակայն թէև լրագիրները հրատարակեցին թէմեթթուի նոր օրէնքը, բայց դեռ գործադրութեան չէ դրուած։ Երևի ժողովրդին տրամադրութիւնը կը քննեն։

Պ ի թ լ ի զ ի դ է պ ք ը.—Քանի մը շաբաթ առաջ Պօլսէն եկած յանկարծական հրամանի մը վրայ Պիթլիզ մեկնեցաւ տեղիս նորընտիր կուսակալ Թահիր փաշան (Վանի նախկին կուսակալը), իրեն հետ առնելով մէարիֆի միւտիրը, միւտտայի ումուր մուավինին և իրեն հետևորդ պաշտօնեայ Խալիտ պէյը։ Այս մասին հոս խօսուածը հետևեալն է։ Պիթլիսի նահանգէն բազմաթիւ հայ ընտանիքներ, այլևս չը դիմանալով հայաջինջ հալածանքին, կը պատրաստուին գաղթելու արտաքսման։ Թիւրք տարրը տեսնելով որ իր դարաւոր կթան կովը ձեռքէն կելլէ, անմիջապէս գործի կսկսի և կուսակալը կը պաշարէ իր բնակարանի մէջ, պահանջելով որ չը թողու հայոց գաղթել. ուրիշ մանրամասնութիւններ դեռ չը խօսուիր։ Թահիր փաշան Երզնկա հանդիպելով անցաւ Պիթլիզ, և հիմա կը լսենք թէ շատ մը զօրք Երզնկայէն և Էրզրումէն կ'երթան հոն։

Պիթլիզի թիւրք և քիւրդ տարրը շատ լաւ համոզուած է թէ հային գաղթելովը՝ ոչ միայն իր դարաւոր ստրուկը կը հեռանայ, այլև պարպուած դիւղերը լեցուել են Ռուսաստանէն դալիք այն տեսակ իսլամ ցեղերով, որոնցմէն ինքը պիտի վախնայ և շատ փափուկ կացութիւն մը պիտի ստեղծի իրեն համար։ Իսկ նորագոյն տեղեկութիւնները այսպէս կը նկարագրեն դէպքը։ Կուսակալը նշանաւոր սրիկայ մըն է եղեր, ամենէն գեղանի կիները, թիւրք թէ հայ կաշխատի ձեռք ձգել և ընդհանրապէս կը յաջողի. այդ բանին մէջ շիլ դերակատար մըն է եղեր նախկին առաջնորդ Եղնիկ վարդապետ Գալփաքճեան։ Վերջերս խիստ ազդեցիկ Շէյխի մը հարսը ձեռք կանցնէ, շէյխը գէշ խօսքեր կուղղէ վալիի հասցէին, որ, իմանալով, շէյխը կանչել կուտայ և երբ վէճը կը տաքանայ, վալին կառղած ատրճանակը կը պարպէ շէյխին վրայ որ կը վրիպի. շէյխին մարդիկը կը պատասխանեն և վալին կը վիրաւորեն քանի մը տեղէ, ուրիշներ կը վիրաւորուին և կսպաննուին։

Բ ա ն ա ս ր ա կ ա ն շ ա ր ժ ո ւ մ ը Տ ր ա պ ի զ օ ն ի մ է ջ.—Դրացիին ազդեցութիւնը վերջերս երևցաւ հասալ Զատկի օրերը կահագործ Սիմէօնի բանտարները, անշըշուկ գործադուլ մը սարքելով յաջողեցան օրական 11 ժամուայ փոխարէն 10 ժամ աշխատելու իրաւունք ձեռք բերել։ Իսկէ երկու շաբաթ առաջ ալ յոյն և հայ դերձակները կը պատրաստուէին գործադուլի, սակայն ոստիկանութիւնը լսածին պէս մէկիկ-մէկիկ զանոնք կանչեց և սպառնալիքով ետ կեցուց իրենց գաղափարէն։

Կ ա խ ա ղ ա ն.—Նախորդ մէկ նամակով գրած էինք միւլազիմ Նաճի էֆէնտին մզկիթէն ելած ատեն սպաննեց տեղիս գումանտան Ֆէրիդ Համոի փաշան և զինուորական ատեանը մահուան դատապարտած էր զայն։ Յունիսի 28-ին հինգշաբթի գիշերը ժամը 6-ին անկողինէն հանելով Նաճի էֆ. կը տանին մէյտանը, զօրանոցին առջև, և կախաղան կը բարձրացնեն. յանդուգն և անձնուէր չէրքէզ ապան։ Կը հարցնեն թէ ըսելիք մը ունի՞.—Բան մը չունիմ, կ'ըսէ, այլ միայն աղօթք մը ժողովրդին բարօրութեան համար։ Դիակը մինչև հետևեալ առաւօտ ժամը 1-ը կը պահեն կախուած, անշուշտ ժողովուրդը տարտարփեցնելու համար։ Ժամը 1-ին կը տանին փոս մը կը ձգեն դիակը։ Քիչ շատ հասկցող թիւրք տարրը շատ զգածուած է այս խժդժութեան դէմ, իսկ ոչխարանման ամբոխը ժողովրդի նահատակին հանդէպ չունեցաւ պատշաճ զգացումը։ Դիակը հանդարտ կերպարանք մը ունէր, ապացոյց համակրելի ապային հոգեկան վիճակին։

ԿՈՎԿԱՍ

ԳԱՆՁԱԿԻ ՊՕԳՐՕՄԸ

(Շրջաբերական)

Ընկերներ և քաղաքացիներ,

Գանձակում պօգրօմ է։ Ցարական քաղաքականութեան առաջին և վերջին խօսքը, ինչպէս անցեալում, այնպէս և ներկայում—պ օ գ ր օ մ է և պ ր օ վ օ կ ա ց ի ա։ Քանի դեռ թուրք մասսաները տգէտ էին և պրովոկացիայի ենթակայ՝ կառավարութիւնը պօգրոմներ էր սարքում նրանց միջոցով։ Իսկ այժմ թուրք աշխատաւոր մասսաները հասունացել են և կարող են զանազանել իրենց իսկական բարեկամներին ու թշնամիներին, նրանք հասկացել են, որ իրենց երջանկութեան գրաւականը գտնւում է հարևան ժողովուրդների աշխատաւոր տարրերի—հայերի, ռուսների, վրա-

ցիների — դաշնակցութեան ու եղբայրութեան մէջ։

Թուրք-հայկական պօգրոմները անհնարին են դարձել — այժմ սարքում են կօզակային պօգրոմներ։ Օգոստոսի 15-ին կօզակները, հետամուտ լինելով այն տերրօրիստներին, որոնք „Դաշնակցութեան“ գանձակի կօմիտէի որոշումով սպանել էին մատնիչ Գուրին, մըտքերում դրին ձերբակալել բոլորովին անմեղ մարդկանց՝ քաղաքի բոլորովին այլ ծայրերում, որպէսզի դրանով հանեն վրէժը կառավարութեան, որ կորցրեց իր մի նոր լաւ լրտեսին։ Ազատ քաղաքացիները ամենևին չը կամենալով իրենց ենթարկել դաշտային ա-ր ա գ ա ձ ի գ դատաստանին, որ կախաղան է բարձրացնում թէ՛ մեղաւորին և թէ՛ անմեղին, հրացանաձգութեամբ պաշտպանւելով անհետացան, և այդ միջոցին մի կօզակ սպանուեց և մէկն էլ ծանր վիրաւորուեց։

Օգոստոս 17-ին սպանուած կօզակին թաղեցին՝ նախամտածուած շքեղ սգահանդէսով։ Բազմաթիւ պսակների թւում առանձնապէս աչքի էր ընկնում մի մեծ պսակ, որի վրայ գրած էին այս բնորոշ բառերը. „ընկաւ թագաւորի և հայրենիքի դաւաճան հայերի ձեռքից“։ Ամեն ինչ սկզբից պատրաստուած է եղել։ Հայերի թաղով անցնելիս՝ կօզակ օֆիցէրի տուած նշանի համաձայն՝ յուղարկաւորութեան հանդէսից յետ մնացած մօտ 20 կօզակների խմբից լսուեց երկու պրովօկատօրական տրաքոց,—հրացանով դէպի վեր, և ատրճանակով՝ դէպի վար։ Այս փաստը իրենց աչքով տեսնող քաղաքացիներին կարելի է տասնեակներով հաշուել։

Յուղարկաւորութեան ուղեկցող հետևակ զօրքի ենթաժշտական խումբը և հասարակութիւնը փախան. միայն կօզակները, որ սկզբից ամեն բան գիտէին, տեղից չը շարժուեցին։ Սկսուեցին համազարկեր դէպի անպաշտպան քաղաքացիների տները։ Երկու մարդ սպանուեց և շատերը վիրաւորուեցին։ Բայց այդ բաւական չէր։

Կառավարութիւնը խորհեց առաջ բերել նաև հայ-թրքական պօգրոմ։ Ամսի 18-ին, երեկոյեան կօզակ օֆիցերը հայերի թաղում, առանց որևէ առիթի, հրացան արձակել տուեց մի թուրք կառապանի վրայ, որպէսզի դրանով բռնկի թուրքերի զայրոյթը,—բայց այդ բանը նրան չաջողուեց։ Թուրքը ազատուեց, փախաւ և յայտնեց այդ մասին հայ ու թուրք ազգաբնակութեան։ Միջոցներ ձեռք առնուեցին և պրովօկացիան չաջողուեց։

Նոյն օրը երեկոյեան կօզակները մորթոտեցին թուրքերի 20 ոչխարները, և լուր տարածեցին, որ այդ հայերն են արել։ Մանէօվրը դարձեալ չաջողուեց։ Թուրք քաղաքացիները ըստ արժանւոյն պատասխանեցին նաև այդ պրովօկացիային, ամենաբարեցակամօրէն իրենց տներն ընդունելով ու պահպանելով փախած հայերին։ Ազատութեան գործը նրանց մէջ այժմ ունի վստահելի բարեկամներ։

Օգոստոսի 20-ին կօզակները նորից պրովօկացիա սարքեցին։ Հայերի թաղով անցնելիս՝ հէնց իրենք 2—3 անգամ գնդակ արձակեցին, սպանեցին մի ձի և այդ բանը գցեցին հայերի վրայ։ Յարձակուեցին անպաշտպան քաղաքացիների վրայ, շատերին վիրաւորեցին, սպանեցին 16 հոգի և կողոպտուեցին տներն ու խանութները։ Հայերը փախան թուրքական թաղը, ինչպէս անվտանգ մի տեղ։ Ամբողջ փողոցը մաքրուած է բնակիչներից։ 76 տուն բռնուած են զօրքով, և կօզակները վայրագութիւններ են գործում։

Դժուար էր նկարագրել կօզակների գազանութիւնը։ Շատ փաստերից յիշատակենք մէկը—այն որ նրանք կտոր-կտոր արին ուսուցիչ Դանիէլեանցի կնոջը և երեխային։ Եթէ հետևակ զօրքերը չը լինէին, որ իսկոյն բռնեցին փողոցները և արգելք հանդիսացան կողոպտման և սպանութիւններին՝ ամբողջ քաղաքը կոչնչանար։

Կառավարութիւնը՝ Թիֆլիզի փողոցային և հայատեաց մամուլի բերանով արդէն լուր տուեց Ռուսաստանին այդ դէպքի մասին պատկերացնելով ամեն ինչ իր համար շահաւէտ գոյներով։

Քաղաքը երկիւղի և լքման մէջ է։ Սակայն այդ երկար չի տևի։ Դա կառավարութեան վերջին փորձն է։ Ազգաբնակութեան բոլոր մասերը արդէն նրա դէմ են. նրան այժմ մնում է գործել կօզակների ձեռքով։ Բայց սրանց աչքերն էլ կը բացւին.—չարագործ կառավարութեան ձեռքին նրանք երկար ժամանակ կոյր գործիք չե՛ն դառնայ. կը գայ ժամը և միապետութիւնը կը կործանուի համայն Ռուսաստանի բոլոր աշխատաւոր ժողովուրդների միահամուռ հարուածների տակ։

Քանի դեռ կը թագաւորէ բռնակալութիւնն ու ինքնակալութիւնը—երկրում խաղաղութիւն չի լինի։ Միայն ինքը՝ ժողովուրդը կարող է հաստատել խաղաղութիւն, հանգստութիւն և դէմօկրատիական ազատ կարգեր։ Աշխատաւոր ժողովուրդի գործօն տարրերը կուրծքները դէմ տուած՝ կը կուեն իրենց իրաւունքները ոտնատակ տուողների դէմ և անպատիժ չեն թողնի այդ նոր պրովօկացիայի իսկական հեղինակներին։ Թող պօգրոմ սարքողները մտածեն, որ կա՛յ ժողովրդի նեմեզիդան, որ քնած չէ և չի մոռանայ իր սուրը բարձրացնելու ժողովրդի թշնամիների դէմ։

Կորչի՛ պրովօկացիան, կորչի՛ ինքնակալութիւնը,
Կեցցէ՛ ժողովուրդների եղբայրութիւնը,
Կեցցէ՛ ֆեդերատիվ ռամկավար հանրապետութիւնը,
Կէցցէ՛ սօցիալիզմը,
Կէցցե՛ն Ռուսաստանի յեղափոխ. գործօն ուժերը։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԳԱՆՁԱԿԻ ԴԷՊՔԸ

Օգոստոս 22

Գանձակի մտերքում Ելէնենդորֆ կոլօնիայում իր տան առաջ սպանուում է գերմանացի Գուրը։ Սպանողներին հետապնդում են կօզակները։ Սկսւում է հրացանաձգութիւն երկու կողմերից, որի ժամանակ երկու կօզակ վիրաւորւում են. մէկի վերքը ծանր լինելով՝ հէնց հետևեալ օրը վախճանւում է։ Սպանողներն ազատ են։

Սակայն բանը դրանով չի վերջանում։

Մեռած կօզակի թաղման պրոցէսն է։ Ահագին բազմութիւն՝ կօզակների, հետևակների—օֆիցերների և ռուս հասարակութեան՝ ուղեկցում են դիակին։

Եւ յանկարծ կատարւում է սարքովի մի պրովօկացիա՝ սովորական Ռուսաստանում, սակայն չը տեսնուած մեզ մօտ։

Երբ յուղարկաւորութիւնը անցնում էր և հասել էր „Միշի Վեյգանից" ներքև, Տէր-Ներսիսեանի տան առաջ „անյայտ" տեղից լսւում է մի հրացանի ձայն, և դա բաւական էր, որ կոզակները սկսեն համազարկ տալ դէպի անցնող հայերը, դէպի շրջակայ տներն ու պատուհանները։

Բաւական սպանւածներ և վիրաւորներ։ Քաղաքը ահ ու դողի մէջ է։ Շատերը ունևոր հայերից — փախչում են։

„Պօգրօմի" տեղը—որտեղ դէպքն էր կատարւել—բոլոր տները և խանութները դատարկւում են նոր զօրքեր բնակեցնելու համար։

Քաղաքը ենթարկւած է 6000 ր. տուգանքի։

Պրովօկացիան խօսել է… այդ ակներև է։ Կամուրջի մօտից (Թրքական Թաղից) վեր են բարձրանում մի խումբ կոզակներ, որոնք լուրերին նայելով, փող էին տանում, որովհետև հրացանները պատրաստ բռնած էին։ Տեսնողները պատմում են, որ դրանցից մէկի ձին մի քիչ ծուռում է. այդ միջոցին լսւում է հրացանի ձայնը (արձակողը իրենցից է)—ձին ընկնում է, նստած կոզակը և… Սկսւում է աջ ու ձախ հրացանաձգութիւն. Թուրքական Թաղից նոր-նոր խմբեր են գալիս կոզակների, ոմանք հետևակ, և խաչաձև բռնելով փողոցները սկսում են անցորդներին խփել, սպանել, վիրաւորել։ Փողոցների լապտերները վերցնում, նաւթը թափում են ու վառում։ Նրանց յաջողւում է կրակել 3 տուն Գալիցինեան փողոցում (Բօշի-բիւչա), բարեբախտաբար յաջողւում է հրդեհը հանգցնել։ Այսպէս նրանք շարունակում են իրենց գնացքը քաղաքի համարեա բոլոր փողոցներով։ Մինչև ժամը 11 և կէսը փողոցներում ամայութիւն էր տիրում, և սարսափելի լռութեան մէջ լսւում էր միայն հրացանների, դռների ու լուսամուտների ճարճատիւնը։ Ժամը 11 և կէսից կարելի էր դուրս գալ փողոց։ Կոզակների հետքն էլ չը կար։ Երևում էին տեղ-տեղ միայն հետևակ զինւորներ։ Զինւորները կամաւոր կերպով օգնում են հրդեհը հանգցնելուն։

Միւս կողմից զանազան պրօվօկատօրներ սկսում էին աղաղակել.—Հայերը սպանել են Լաբինեան գնդի գանձապահին… Զինւորները ևս սկսում են գրգռւել, սակայն շնորհիւ ինչ-ինչ հանգամանքների՝ նրանք դուրս գալով փողոց իրենց պահում են շատ կիրթ և անցնող հայերից շատ շատերին նոյնիսկ պաշտպանում են։ Յետագայ տեղեկութիւններից պարզւում է, որ ոչ ոք չէ սպանւած, ոչ միայն գանձապահ այլ և հասարակ կոզակներից… Այդ բոլորը սարքովի լուր էր։

Սրախողխող սպանւել են կանայք և տղամարդիկ։ Նոր-Շէնի ճանապարհին կոզակների համազարկից սպանւել են երկու եղբայրներ։ Փորձեր են կատարւած մի քանի տեղերում հրդեհներ ձգելու, բայց անյաջող։ Փողոցներում—ահագին երկարութեամբ պատուհաններ փշուր-փշուր եղած են։

—

Օգոստոս 22

Այսօր ժամը երեքին, գիշերը, հասայ Գանձակ։ Կայարանում հանդիպեցի Լաբինեան գնդի երեք կոզակի։ Այն լուրը, որ իբր թէ կոզակներին արգելւած է գալ քաղաք, սխալ է միանգամայն. մինչև իսկ քաղաքի փողոցներում նրանք երևում են լկիրշ դէմքով, ահ ու սարսափի մէջ ձգում քաղաքացիներին։ Կայարանում պատահեցի գիմնազիայի 8-րդ դասարանի աշակերտ Ս-եանցին, որը առանց արտասուքների չէր կարողանում պատմել իր և իրենց հետ պատահած դէպքը։

„Երբ համազարկերը սկսեցին, պատմում էր նա, մենք բոլորս փախանք մեր տանը բնակւող գնդապետ Պ.-ի բնակարանը. նա այնտեղ չէր, բայց կինը մեզ ընդունեց։ Շուտով թափւեցին մեզ մօտ շրջակայ տներից և խանութներից մօտ 40 հոգի-կին երեխաներ. տանտիրուհին մեզ տարաւ մի առանձին սենեակ. մեր տունը պահպանում էին 3 կոզակներ։ Մենք ապահով էինք և մտածում էինք դրսում մնացողների մասին։ Յանկարծ երևաց Շէմախինեան գնդի սպայ Կարաբինը ութը զինւորներով։ Նրա երևալը մեզ երկիւղի մէջ չը դրեց, որովհետև նախ զինւորները չէին մասնակցում. երկրորդ սպայ Կարաբինը մեզ մօտ պանսիօներ էր. բայց ինչպէս երևում է այդ օրը Կարաբինը ուզում էր ցոյց տալ թէ ինքը ով է" (պատմող Ս-եանցը սկսեց դողդողալ և գունատւել. մտքերը չփոթեցին. բայց նա շարունակեց). Կարաբինը թողեց 4 զինւոր փողոցում, 4-ն իր հետ վերցրած եկաւ ներս։ „Հա՛, այստեղ հայեր են եղել. ձեռքերդ վեր, շուտ". մենք բոլորս ձեռքներս բարձրացրինք։ Մեզ սկսեցին խուզարկել. ինչ խօսք որ ոչինչ չը գտան և ոչ մէկիս մօտ։ „Դէ, այժմ ձեզ պիտի կոտորեմ" բղաւեց՝ աչքերը արիւնով լցւած։ „Զինւորներ, լցրէք հրացանները"։ Զինւորները կատարեցին. ինքը հանեց գրպանից բրաունինգը և լցրեց փամփուշտներով։ „Զինւորներ, ուղղեցէք դէպի սրանց". մենք բոլորովին կորցրինք մեզ. երեխաները սկսեցին աղաղակել, կանայք լալ։ Մենք յիշեցնում էինք, որ մեր ծանօթն է եղել, մենք շատ ենք հիւրասիրել նրան, բայց նա անդրդւելի էր և բրաունինգը ուղղած մեզ, բղաւում էր. „կը կոտորեմ, ինչպէս շների"։ Այդ վայրկեանին չեմ յիշում ինչ կատարւեց, միայն յիշում եմ, որ մեզ աքացիներ տալով վեր կացրեց գետնից և հրամայեց։ „Թող երեխաները և կանայք դուրս գան այս սենեակից"։ Իսկոյն դատարկւեց մեր սենեակը, ուզում էր դուրս գալ և Պ.-ի կինը։ Հայրս բռնեց նրա փեշերից, լալագին ձայնով կանչեց, „ո՞ւր ես գնում, եթէ մեռնել է, դու էլ մեռիր մեզ հետ"։ Մինչ այդ դրութեան մէջ էինք՝ յանկարծ ներս մտաւ նոյն բնակարանը Շամախինսկի գնդի հրամանատարը, սկսեց հանգստացնել թէ, մի վախէք, ոչինչ չը կայ, ոչինչ չի լինի։ Կարաբինը դուրս եկաւ։ Մեզնից և ոչ մէկը չը համարձակւեց ասելու Կարաբինի մասին որևէ խօսք։

Լոյսը արդէն բացւել էր։ Ես ճանապարհ ընկայ քաղաք. ինձ հետ կառքի մէջ նստած էր մի Նուխեցի վաճառական, որը եկել էր Գանձակ ինչ որ դատարանական գործով։ Նա պատմեց այսպէս։ „Ամսի 20-ին առաւօտեան ես գընում էի Հաջիքենդ (ամառը նահանգական դատարանը տեղափոխւում է Հաջիքենդ), երբ քաղաքից դուրս եկայ ինձ պատահեց Էլէնենդօրֆի ճանապարհին մի կոզակի օֆիցեր և մօտ 20—25 կոզակ. կոզակները գնում էին շատ անկանոն—ոչ զինւորական կարգով. օֆիցերը զրուցում էր դրանց հետ։ Ինձ այդ բոլորը ապշեցրեց, այլ և այն, որ օֆիցերին ես ճանաչում էի դեռ Նուխուց, անցեալ տարի—երբ բազմաթիւ փորձեր արեց հայերի և թուրքերի յարաբերութիւնը վատացնելու համար, մինչև իսկ մի քանի անգամ, երբ դրութիւնը շատ լարւած էր, օդում ատրճանակ կրակեց, բայց ոչինչ չը յաջողւեց անել. հայ և թուրք միացած բողոքեցին և նրան հեռացրին Նուխուց։ Երբ այդ անպիտանին տեսայ սիրտս սկսեց անհանգստանալ. ես մի չարագուշակ բան էի սպասում, մանաւանդ որ լուրեր կային թէ, կոզակները սպառնացել էին։ Երբ հասայ Հաջիքենդ, դատարանում իմացայ, որ քաղաքում արդէն սկսել է կոտորածը"։

Ահա թէ ինչ է պատմում Ա. քահանան։ „Ամսի 20-ին ես պէտք է գնայի գիւղը. վաղ առաւօտեան ճանապարհ ձգեցի ձիս մեր գիւղացիների հետ, իսկ ես ժամը 9-ին կառքով ճանապարհ ընկայ, որ ձիուս հասնիմ. դեռ չը հասած քաղաքի ծայրին (Սուլուկեցոց Թաղը) տեսնեմ յետևիցս քշելով երկու կոզակ են գալիս. երբ հաւասարեցին ինձ, յարձակւեցին կառքիս վրայ, ինձ հայհոյելով վայր բերեցին և իրենք նստելով քշեցին դէպի գերմանական գաղութը։ Երբ ես ինձ ուզում էի հաշիւ տալ այս եղելութեան մասին, շուրջս հաւաքւած քաղաքացիք իմ ուշադրութիւնը գրաւեցին,—ինչ որ հրացանի ձայներ էր որ գալիս էին ցածից. ես հասկացայ որ արդէն նախատեսնւած պօգրօմը սկսւել է։ Բոլորը սկսեցին պատսպարւել տներում, իսկ ես ճանապարհ ընկայ արդէն ոտքով։ Հազիւ կէս ժամ անցած, երբ ես հասել էի Հաջիքենդ գնացող մի թուրքի կառքի—լիքը թուրք երեխաներով և կանանցով, կոզակների մի ուրիշ խումբ, աւելի կատաղի կերպով քշեցին դէպի կառքը. Թուրք կանայք սկսեցին աղմուկ հանել, նրանք ականջ չը դրին. մի քանի հարւածներով վար բերեցին բոլորին, երկու ձին յանձնեցին այդ թուրքե-

րին, հրամայեցին պահել մինչև իրենք կը վերադառնան, և քշեցին կառքը։

„Երբ ես հասել էի իմ ձիուս, մենք արդէն կազմ.ում էինք մի մեծ քարան՝ մօտ 20 հոգուց, մեծ մասամբ կանայք և երեխաներ, զանազան գիւղերից։ Մեր դէմ երևացին գերմանական գաղութից եկող մի խումբ կօզակներ՝ մօտ 20—30 հոգի, որոնք շտապում էին քաղաք, անկանոն և սրնթաց. կօզակների տեսքը կանանց վախեցրեց. նրանք սկսեցին փախչել. ես բարձրաձայն համարեցի կանանց և երեխաներին ճանապարհից ծռել և թաքնուիլ. երբ կօզակները մօտեցան միւս անցորդներին, սկսեցին ամենակոպիտ հայհոյանքներով նրանց խուզարկել. ով ձայն էր հանում՝ խփում էին. մի երկուսին ձիուց վայր գլորեցին, քրքրեցին թամբերը, բայց ոչինչ չը գտնելով թողեցին նրանց։ Մենք երկիւղով ճանապարհներս շարունակեցինք. մի քառորդ ժամ յետոյ երևաց երկրորդ խումբը, էլի նոյնքան՝ մօտ 30—35 կզակներ. նոյն բանը մեզ բոլորիս հետ—խուզարկութիւն և հայհոյանք։ Մինչև գերմանական գաղութը հասնիլը պատահեցին 6 այդպիսի խմբեր. մօտաւորապէս ամեն մի խումբը՝ 30—40 մարդով. ամեն անգամ մեզ խուզարկում, ծեծում էին, ձիերից վայր էին ձգում և շտապում դէպի քաղաք։ Գաղութում ոչ մի հայ չէր երևում փողոցում. ծանօթ գերմանացիք մեզ չէին բարևում։ Մենք շտապով դուրս եկանք գաղութից, ճանապարհին խուզարկելով և մի քանի նաղային հարուածներ կրելով կօզակներից։ Գաղութից դուրս՝ բաց դաշտով փախչում էին մի քանի հայ կանայք, երկու երեխայ և մի դեռահաս աղջիկ. դրանք գաղութից փախչում էին մօտակայ հայ գիւղը պատսպարուելու։ Երբ մենք մօտեցանք նրանց, մի փոքր հանդարտան և սկսեցին պատմել, թէ ինչպէս կօզակները յարձակուել են դրանց վրայ և ուզեցել են բռնաբարել. դրանք թողել են և փախել. բարեբախտաբար կօզակների ձեռին զէնք չէ եղել և նրանք ազատուել են թողնելով տունը օրօրոցում փոքրիկ երեխային։ Ի՞նչ է եղել նրա դրութիւնը. չը գիտեն“։

Այդ օրինակ բռնութիւնները անթիւ են...

ԿՈՒԱԿՑԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵՆԷՆ

(ՄԻ ՔԱՆԻ ՓԱՍՏԵՐ)

Առաջ կը բերենք քանի մը համառօտ քաղուածներ այն ֆրանսերէն Տ ե ղ ե կ ա գ ր է ն, որ „Դրօշակի“ խմբագրութիւնը ներկայացուց Շտուտգարտի կնդրէին՝ Բրիւսելի Սոցիալիստական Միջազգային Բիւրոի միջոցով։

Հ. Յ. Դաշնակցութիւնը կընդգրկէ պատմական Հայաստանի երկու մեծ մասերը, Տաճկահայաստան և Ռուսահայաստան։ Դաշնակցութիւնը ճիւղաւորումներ ունի Պարսկաստանի, ինչպէս նաև Ամերիկայի, Եւրոպայի, Պուլկարիոյ, Ռումանիոյ և Եգիպտոսի հայ գաղութների մէջ։ Կուսակցութիւնը հիմնուած է 1890ին, Տաճկահայաստանի մէջ հայ ժողովրդի ազատագրութեան համար, որը դրամատիրական մեծ պետութիւնները մատնեցին ամենավայրագ բռնութիւններու, հակառակ այն խոստումին որ յանձն առին դէպի հայ ժողովուրդը Բերլինի Դաշնագրի 61-րդ յօդուածով։

Հայաստանի էն ստրկացած և էն դժբախտ մասին մէջ էր, որ հայ յեղափոխութեան առաջին կազմակերպութիւնները ծագում առին։

ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆ. (Բերուած է վիճակի ընդհանուր նկարագիրը)։

Դաշնակցութիւնը կազմակերպուած 1890-ին, իբր անխուսափելի հետևանք խորին և ընդհանուր դժգոհութեան, 1892-ի Ընդհանուր ժողովին մէջ իր քաղաքա-հասարակական դաւանանքը բանաձևեց։ Այս յայտագրին քաղաքական մասը կը պահանջէ հայկական վեց վիլայէթներու մէջ քաղաքական ազատութիւն, առանց ցեղի և կրօնի խտրութեան։

Սակայն Դաշնակցութիւնը իբր ներկայացուցիչ աշխատաւոր մեծ մասսաներու շահերուն, չէր բաւականանար քաղաքական պահանջումներով։ Կիտակցութիւնը ունենալով իրականութեան, գիտնալով նաև որ երկիրը դեռ մեծ մասով գոյութեան միջնադարեան պայմաններու մէջ կը գտնուէր, որով պատրաստ չէր բուն սոցիալիստ գործողութեան, հայ յեղափոխականները հէնց 1892 էն իրենց յայտագրին մէջ ընդունեցին միջազգային սոցիալիզմի մեծ սկզբունքները։

Ահա թէ ինչ կըսէ 1892-ի մեր „Յրագիրը“.

Ինքնավարութիւն և քաղաքական իրաւունքներ ձեռք բերելը մեր աշխատանքի մէկ մասն է միայն։ Այս իրաւունքները բաւական պիտի չը ըլլան երաշխաւորել աշխատաւորին իր աշխատութեան լիուլի վայելումը—Մենք պիտի ջանանք հաւաքական սեփականութեան և աշխատանքի սկզբունքը տարածել՝ պատրաստելու հասարակական կազմակերպութեան համար, որ պիտի հաստատուի, ուշ կամ նուազ, առաջադէմ երկիրներու մէջ, պրոլետարիայի յեղափոխութիւնով։

Դաշնակցութեան ծրագրին մէջ սոցիալիզմը Տաճկաստանի համար առաջնորդող սկզբունք մը էն։ Դասակարգային բաժանումները գրեթէ կանհետանային փոխանակ շեշտուելու, ապերասան բէժիմի մը բռնակալութեան տակ՝ որ կը ճզմէր հարուստ և աղքատ, կը խեղդէր ամէն անհատական նախաձեռնութիւն, կոչնչացնէր ազգային հարստութեան բոլոր աղբիւրները, ազատ ասպարէզ տալով պաշտօնեաներու կամայականութեան, կազմակերպուած աւազակութեան։ Զը կայ ապահովութիւն վաճառականներու և ճարտարագործներու համար, չը կան հաղորդակցութեան ուղիներ, ոչ ալ դրամատիրութիւն, չը կայ պրոլետարիա եւրոպական մտքով։ Մեզի կը մնար ուրեմն սոցիալիստական սկզբունքները տարածել երկրի մտաւորականներուն մէջ. (ուսանողներ, ուսուցիչներ և այլն) և մենք այդ ըրինք մեր փրոփականդիստներու և մեր հրատարակութիւններու միջոցով։

Վերջի 17 տարիներու ընթացքին մէջ հայ յեղափոխականներու համար, հրամայական և անողոք անհրաժեշտութիւն էր կռիւ՝ բռնապետութեան աւատական մնացորդներու դէմ, անդադար և արիւնահեղ կռիւ։

Աւելորդ է մանրամասն պատմել այս ողբերգական կռիւներու անցուդարձը, որ Դաշնակցութիւնը մղեց երկար տարիներ անխիղճ բռնակալութեան մը դէմ և այնպիսի սարսափելի միջավայրի մը մէջ ուր մոլեռանդ ամբոխներու վայրենի բնազդները սանձարձակ կը գործեն։

Հայ ազատագրութեան գործը կանգ չառաւ նոյնիսկ ահաւոր աղէտներէն յետոյ, երբ հակազդեցութիւն մը սկսած էր մեր ժողովրդին մէջ։ Ոչ մէկ ելք չը կար։ „Յեղափոխութիւնը մեռած է“, կըսէին

սակայն մեր կուսակցութիւնը այս վտանգաւոր հոսանքին տեղի չը տուաւ։ Ան սեղմեց իր շարքերը և քարոզեց դիմադրել։ Ցենած գիտակից տարրերուն վրայ՝ իրեն կողմը ունենալով տառապող և բազմաչարչար ամբոխին համակրութիւնը, Դաշնակցութիւնը կռիւը շարունակեց յուսահատութեան կորովով մը։ Ստիպւեցաւ կռւիլ բուն թշնամիին և իր հայրենակիցներու յուսաթափութեան դէմ։ (Բերւած են փաստեր)։

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ.—Յեղափոխական կռւին մէջ լուսաւորւած ռամկավար և օցիալիստ սկզբունքներով, Դաշնակցութիւնը կը ջանար ընդլայնել, կարելի չափով, իր գործունէութեան շրջանը։ Արդէն հէնց իր գոյութեան սկիզբէն ան կը քարոզէր Օսմանեան կայսրութեան ժողովուրդներու մէջ համերաշխութիւն։ Կը հրաւիրէր, մշտակի կոչերով, համաձայնութեան գալ ընդհանուր թշնամիին, սուլթանի բացարձակապետութեան դէմ։ Կը ջանար կապեր հաստատել զանազան ազգութիւններու յեղափոխական կամ բարենորոգչական կուսակցութիւններու հետ։ Յարձակողական դաշնակցութիւն կնքեց Մակեդոնիոյ յեղափոխութեան կուսակցութեան դէմ, եւրոպական Թիւրքիոյ մէջ միասին գործակցութեան համար.—Դաշնակցութիւն մը, որ ի միջի այլոց, նիւրագործւեցաւ, 1900-ին կռւի դաշտին վրայ, Էդիրնէի մօտ և կախաղաններուն վրայ որ Թիւրք կառավարութիւնը բարձրացուց միևնոյն քաղաքին մէջ, պատժելու համար հայ-մակեդոնական դաւադրութեան կենդանի հեղինակները։

1894-էն ասդին Երիտ. Թիւրքերու հետ մերձեցումի փորձեր ըրինք։ Վերջին ժամանակներս Թիւրքերու և քիւրդերու մէջ էն առաջադէմները և անկեղծները սկսած են հասկնալ մեր ծրագիրը և ձգտումները, մեզի կը մօտենան և կը հետևին զուտ յեղափոխական ճանապարհով։ Անտարակոյս վերջի երկու տարւայ մէջ մահմեդական ժողովուրդներու ներկայ զարթնումը, որ յայտնի եղաւ արիւնահեղ ցոյցերով Օսմանեան պաշտօնակալութեան դէմ Էրզրում, Պիթլիս, Քասթէմունի, մասամբ պարտական է մեր 16 տարւայ յեղափոխական գործունէութեան, ինչ որ Թիւրք շարժման պարագլուխները իրենք ևս կը խոստովանին։

Այսպէս հայ-միւսիլմանական գործակցութիւնը մեր երբեմնի երազը, իրագործւելու վրայ է։ Արդէն Խանասորի և Սասունի անցեալի կռիւներուն մէջ մենք մեր շարքերուն մէջ ունեցած ենք Թիւրքեր և քիւրդեր, իբր կռւող և գաղտնի գործիչներ։ Բայց ասոնք առանձին անհատներ են մահմեդական մասսայի մէջ որ խորապէս պահպանողական և յետադիմական էր դեռ։

Այսօր նոր դարաշրջան մը կսկսի Օսմանեան կայսրութեան բոլոր անբախտ ժողովուրդներուն համար։ Յեղափոխական շարժումը մեծ անդունդ մը բացած է ժողովուրդ և պաշտօնակալութեան միջև, գիտակցութիւնները կը լուսաւորւին, կ'ըմբոստանան աննախընթաց բարբարոս րէժիմին դէմ. անշուշտ հեռու չէ այն օրը ուր սուլթանի բռնակալութիւնը տեղի պիտի տայ զարթնած ժողովուրդներու միացած գրոհին։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ.—13 տարի շարունակ, 1890 էն 1903, Դաշնակցութեան գործունէութիւնը գլխաւորապէս Թրքահայաստանի մէջ կեդրոնացած էր։ Կովկասեան կոմիտէները, ինչպէս նաև Պարսկաստանի և գաղութներունը, օժանդակ կազմակերպութիւններ էին, որոնք կը հայթայթէին դրամ, մարդ, զէնք Թրքահայերու ազատագրութեան շարժումին։

... Սակայն մեր կուսակցութիւնը անտարբեր չէր կրնար մնալ Ռուսաստանի մէջ բռնի ռուսացումի քաղաքականութեան հանդէպ, ուրկէ կը տառապէին յաճախ աշխատաւոր մեծ մասսաները։ Կուսակցութեան կովկասեան հատւածները որոշեցին հակազդել բացառիկ օրէնքներու դէմ և դիմեցին ամէն կարելի միջոցի, նոյնիսկ ստորերկրեայ գործունէութեան։—Դըպրոցներու և ուրիշ կրթական հաստատութիւններու փակումէն յետոյ, Դաշնակցութիւնը իր ձեռքը առաւ ժողովրդական դաստիարակութեան գործը։ Հիմնեց քաղաքներու և գաւառներու մէջ գաղտնի դպրոցներ, ուր ուսուցիչներ մայրենի լեզուն կաւանդէին ժողովրդին։ Շատ տեղեր պ ա ր տ ա ւ ո ր ի չ և ձ ր ի կրթութիւն հաստատեց, որուն ծախքը՝ համայնքը կը հոգար։ Կը հիմնէր նաև գաղտնի գրադարաններ, կը տարածէր ժողովրդին և մտաւորականներուն մէջ յեղափոխական գաղափարներ, գրականութեան, իր կեդրոնական օրգանին և արտասահման հրատարակւած գրքոյկներու միջոցով։

Դաշնակցութեան գործունէութիւնը հոն կանգ չառաւ։ 1902-էն սկսած ան բացէբաց և զուտ յեղափոխական դարձաւ։ Կարգ մը գաւառներու մէջ մենք ձեռք ձգեցինք կառավարական գործունէութեան մէկ մասը—արդարադատութիւնը՝ վճռական հարւած մըն էր իր հեղինակութեան։ Կուսակցութիւնը դատարաններ հաստատեց և տարիներով գերագոյն իրաւարարի պաշտօնը կատարեց, գիւղացիներուն մէջ ծագած ամէն տեսակ վէճեր ինք կը դատէր և կը վճռէր, դատաւորները յաճախ ընտրւած էին համայնքներէն, կուսակցութեան հսկողութեան տակ կը գործէին։ Յաճախ մեր մահմեդական դրացիները իսկ—Թիւրք, քիւրդ կամ Թաթար գիւղացիներ—կը դիմէին կուսակցութեան դատարաններուն, վիճելի հարցերուն վերջ տալու համար. այսպէս մենք շատ մը մահմեդական համակրողներ ունեցանք, որոնք յեղափոխական դատարանի սնդուկին իրենց դրամավճարները կընէին։

Հասան աւելի մռայլ օրերը։ 1903 յուլիսին ցարը ուկազով մը հրամայեց գրաւել հայ եկեղեցական կալւածները։ Այս անարդար և ըմբոստացնող միջոցը չափը անցուց։

Դաշնակցութիւնը բողոքի շարժման մը նախաձեռնութիւնը և ուղղութիւնը ձեռք առաւ, և Ռուսահայաստանը շուտով արիւնահեղ կռւի և վրիժառութեան թատրը դարձաւ։ (Բերւում են մանրամասնութիւններ)։

Հայ ժողովրդի ընդհանուր ոտիկանգնումը ապարդիւն չանցաւ։ Պետերբուրգի պալատականներուն մտածել տւաւ և քիչ յետոյ, 1905-ի ամրան, ցարը, ուրիշ ուկազով մը, հայ ժողովրդին վերադարձուց իր ազգային կալւածները և միաժամանակ բանալ տւաւ հայ դպրոցները։

Վրայ հասաւ ռուսական մեծ յեղափոխութիւնը, որ անսահման կայսրութիւնը դղրդեց։ „Դաշնակցութիւնը“ մասնաւոր ծրագրի մը պէտք զգաց, Կովկասի միւս յեղափոխական և սօցիալիստ կուսակցութիւններուն հետ

գործակցութեան համար։ Կուսակցութեան խորհուրդը 1905 մայիսին, այս նպատակով „Նախագիծ“ մը խմբագրեց որ Կովկասի մէջ մեր գործունէութեան խարիսխը եղաւ։

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄ.—Մանրամասն նկարագրելով ամբողջ եղելութիւնը, տեղեկագիրը անցնում է երկու ժողովուրդներին հաշտութեան խնդրին։ Խորին ցաւզգացումով մըն է որ Դաշնակցութիւնը ամբողջ տարիէն աւելի մղեց այդ աղէտալի կռիւը, երկու ցեղերը, տարբեր, թէև մշակութիւնով և ազգակցութիւնով, շարունակ երկար տարիներ կատարելապէս համերաշխ ապրած էին։ Մեր կացութեան եղերականութիւնը աւելի կը շեշտէր յարաճուն աւերակներու տեսարաններով, երկուստեք թափուած արեան ալիքներով, հայ և թաթար հազարաւոր դիակներով, երկրին մէջ տնտեսական բոլոր կեանքի դադարումով, թշուառութիւնով, սովով և համաճարակներով։

Մեր կուսակցութիւնը պատասխանելով հանդերձ յարձակումներուն, չէր դադրեր հաշտութիւն և խաղաղութիւն քարոզելէ։ Վերջ ի վերջոյ մեր կոչերը լսեցան։ Թաթար մասսաները և իրենց ղեկավարները իրենք վերջապէս զգացին, Դաշնակցութեան ուժգին գրոհին առջև, իրենց արշաւանքներուն անօգուտութիւնը. հասկացան միաժամանակ այն ամօթը, որ հլու գործիքը եղած էին գարշելի բռնակալութեան մը ձեռքերուն մէջ։

Այսօր գոհ ենք յայտնելու որ ոչ միայն երկու դրացի ցեղերու յարաբերութիւններուն մէջ անդորրութիւնը վերահաստատուած է, այլ նաև գործակցութիւն մը իրականացու վրայ է, գոնէ տնտեսական հողին վրայ։ Մեր պրօպականդիստները վերջերս մեծ յաջողութիւն ունեցան միւսիւլման աշխատաւորներու մէջ, շնորհիւ անոնց ջանքերուն, հայեր և թաթարներ այսօր միասին են, մէկտեղ գործադուլներ կընեն դրամատէրերու դէմ, նոյնիսկ այն գաւառներուն մէջ ուր քիչ առաջ, եղբայրասպան ընդհարումներու թատր էր, ինչ որ մեր ապագայ յաջողութեան համար թանկագին գրաւական մըն է։

Հայ-թրքական խաղաղութենէն յետոյ, կուսակցութիւնը վերստին ուշադրութիւնը դարձուց բուն էական գործին—այն է ժողովրդի կազմակերպութեանը, ինքնակալութեան և դրամատիրութեան կրկին ըէժիմէն դէմ...

Անցնելով տերրօրական գործունէութեան, տեղեկագիրը կ'աւելացնէ թէ, կուսակցութիւնը պատուհասեց շարք մը „բարձր անձնաւորութիւններ“, իբր կոտորածներու կազմակերպիչներ։ Այսպէս, սպաննուեցան զօրավար Անդրիէվ Գանձակի կառավարիչը 1904-ին. իշխան Նակաշիձէ՝ Բագուի տարահռչակ հերոսը 1905-ին. հրամանատար Բօգուսլավսկի՝ Իկտիրի մէջ 1904-ին. հրամանատար Բրկով, Օլթիի մէջ 1904-ին. ոստիկանապետ Սախարով, շատ մը փոքրիկ պաշտօնակալներ—ոստիկաններ, ոստիկանութեան կօմիսէրներ, խառնակիչներ և այլն։ Նորերս մեր ահաբեկիչներու հարուածներուն տակ ինկան հռչակաւոր Լօլաձէ, Գանձակի մէջ և զօրավար Ալիխանով, թաթար կոտորիչներու պաշտպանը և Վրաստանի մեծ դահիճը։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ.— Դասակարգային բաժանումները հետզհետէ կը շեշտուին Կովկասի մէջ, իբր արդիւնք տնտեսական բնաշրջումին։ Մեքենաներուն կիրառումը, ինչպէս ամէն տեղ, նոյնպէս մեր մօտ իր անխուսափելի հետևանքները ունեցաւ՝ այն է արհեստներու մասնակի անհետացումը և գիւղերու մեծամբոխ գաղթումը դէպի քաղաքները։ Այս գաղթումը ամէն օր կաճի, գիւղացիներու հողերու պակասութեան պատճառով։ Արքունական ընդարձակ հողեր երկար ժամանակէ անմշակ կը մնան. կառավարութիւնը՝ ռուսացումի նպատակով, հողերը տեղացիներուն չի տար և հայ աշխատաւոր մասսաները իրենց հողերու քիչութեան պատճառով, դատապարտուած են կեանքի թշուառութեան։

ԳԻՒՂԱՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ.— Զրկուած հողէ և մշակութեան նորագոյն միջոցներէ, ստիպուած վճարել ծանրաբեռ հարկեր և միևնոյն ժամանակ մատնուած աղաներու և վաշխառուներու անսահման շահագործումին, հայ գիւղացին այժմս կը գտնուի ամենախեղճ գրութեան մէջ։ Այս պայմաններու մէջ, իրաւ պատրաստուած է սօցիալիստական գաղափարներու պրօպականդին և գլխաւորաբար հողի համայնացումին։ Այս նշանաբանով է որ մեր կուսակցութիւնը կը մօտենայ գիւղացիներուն։ Այս վերջի երեք տարիներուն մէջ մեծ յաջողութիւն ունեցաւ. իր բոլոր հեղինակութիւնով ծանրացաւ գիւղական մակաբոյծ տարրերու վրայ և գիւղացիական կեանքին մէջ կարևոր փոփոխութիւններ առաջ բերաւ։ Շատ մը գաւառներու մանաւանդ Գանձակի և Երևանի նահանգներուն մէջ, բաշխել տրուաւ համայնական հողերը յօգուտ հարստահարուած փոքր հողագործներու մեծ մասին։ Այս հողաբաժանումը քսան տարիէ ի վեր չէր կատարուեր հարուստ և ազդեցիկ գիւղացիներու դիմադրութեան շնորհիւ։ Մեր գաւառական կազմակերպութիւնները կանոնաւոր, երբեմն բուռն, կռիւ մղեցին սեփականատէրերու դէմ, և շատ մը գաւառներու մէջ գիւղացիները տասանորդ չը վճարեցին։

ԲԱՆԻՈՐՆԵՐՈՒ ՄԷՋ.—Արդիւնագործական աշխարհի մէջ Դաշնակցութիւնը կը կազմակերպէ հայ բանւորութիւնը՝ դասակարգային կռուի համար։ 1900-էն արդէն կազմակերպեց գործադուլներ, որոնք, քիչ բացառութիւնով, յաջողութեամբ պսակուեցան։

Մեր կազմակերպուած գործաւորներու թիւն է 23,300։

ՍԻՆՏԻԿԱՑԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.—Մեր տնտեսական գործունէութեան ամբողջացուցիչ մասն է։ Քիչ ժամանակի մէջ, այն օրէն ի վեր որ Կովկասի մէջ, մասնակի ազատութիւններ կը վայելենք, մենք կազմակերպեցինք շատ մը զանազան արհեստակցական միութիւններ Թիֆլիս, Բագու, Բաթում, Գանձակ, Երևան Ալէքսանդրապոլ և Շուշի։

Միութիւններու թիւն է՝ այդ քաղաքներու մէջ—110 անդամներու թիւը 10,990։ Բացի այս՝ մենք ունինք գիւղերու մէջ բազմաթիւ գիւղացիական միութիւններ։

Այս միութիւններուն մէջ կազմակերպուած փոքրիկ հողագործներու թիւը 67,000 է։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԹԻԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ. — Մենք ու-

նինք չորս կարգ խմբակցութիւններ. քաղաքական, արհեստակցական, հողագործական և մարտական։

Տաճկահայաստանի, Կովկասի, Պարսկաստանի, Բալքանեան երկրներու և Ամերիկայի մէջ ունինք 3093 խումբ. 165,000 անդամով։

Կուսակցութիւնը ունի 21 Կեդրոնական կօմիտէ, մեծ թւով Թիւրքիոյ և Կովկասի մէջ. երկու բիւրօ, Արևելեան և Արևմտեան, մէկը Երկրին մէջ, միւսը Եւրոպայի։ Այս վերջինը, ի միջի այլոց, կը հրատարակէ կուսակցութեան կեդրոնական օրգանը՝ „Դրօշակը“։

ԲԻՒՋԷ.—Կուսակցութեան աստիճանական ծաւալումով իր եկամուտներն ալ աճեցան։

1890-ին, կուսակցութեան հիմնարկութեան տարին, իր հասոյթը մօտ 130,000 ֆրանք էր։

1895—98 այդ թիւը կէս միլիոնի կը բարձրանար։

1904-ի երրորդ Ընդհանուր Ժողովը որոշեց 800,000 ֆրանքի բիւջէ։

1907-ի, վերջի Ընդհանուր Ժողովը, որոշեց բիւջէն մէկ միլիոն ֆրանք։

Այս տարուայ հասոյթները հետևեալ կերպով բաժնուած են,

1) Յեղափոխական և քաղաքական գործունէութիւն՝ 30%
2) Ժողովրդի զինման համար 35%
3) Պրօպականտ և գրականութիւն 20%
4) Կազմակերպական ծախսեր 20%
5) Պատահական ծախսեր 5%

ՄԱՄՈՒԼ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.—1) Կուսակցութեան կեդրոնական օրգանն է „Դրօշակ“, հիմնուած 1890-ին, որ կը հրատարակւի Ժընէվ։ Հակառակ երկու երկիրներու խիստ գրաքննութեան, գաղտնի ճամբով կը մտնէ Թիւրքիա և Կովկաս. լոյս կը տեսնէ մօտ 14 հազար օրինակ։

2) Մէկ օրաթերթ Կովկաս.—7000 օրինակ։

3) Մի շաբաթաթերթ Ամերիկա, այնտեղի մեր կօմիտէներուն և հայ գաղութին համար։

4) Պարբերաթերթ մը Բալքանեան թերակղզիին մեր գաղութին համար։

5) Շաբաթաթերթ մը հարաւային Ռուսաստանի մէջ։

6) Ֆրանսերէն օրգան մը Եւրոպայի մէջ, ուր լայն պրօպագանդ կ՚ընեն հայկական դատը պաշտպանելու համար Եւրոպայի հանրային կարծիքին առջև։

Կուսակցութեան հրատարակութիւնը բաւական հարուստ է յեղափոխական և սօցիալիստական հրատարակութիւններով, որոնցմէ կան թարգմանութիւններ միջազգային սօցիալիստական գրականութենէն։

Մենք հրատարակած ենք նաև շարք մը գրքեր և գրքոյկներ ռուսերէն, թիւրքերէն և թաթարերէն լեզուներով՝ երկրի համար, և ֆրանսերէն ու գերմաներէն լեզուներով, Եւրոպայի համար։

Կուսակցութիւնը ունի գաղտնի տպարաններ և կը հրատարակէ շատ մը թռուցիկ թերթեր և կոչեր, որ կապ ունին առօրեայ գործունէութեան և ընթացիկ դէպքերու համար *։

* Հասկնալի պատճառներով՝ մենք ստիպուած ենք լռութեամբ անցնիլ Դաշնակցութեան գործունէութեան այն մասերը, որոնք գաղտնի բնաւորութիւն ունին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՕՆԳՐԷՍ.—Որ գումարւեցաւ այս տարի, Վիէննա, կարգ մը կարևոր որոշումներ կայացուց, մեր կուսի և ապագայ գործողութեանց համար։ Ի միջի այլոց որոշեց շարունակել երկու երկիրներու գործունէութիւնը Դաշնակցութեան դրօշակին տակ և ամէն ազդու միջոցներ ձեռք առնել սօցիալիստ և յեղափոխական միւս տարրերուն հետ համագործակցութիւն մը առաջ բերելու համար։

Միջազգային սօցիալիստական կօնգրէսին մասնակցելու առաջարկը ընդունւեց միաձայն։

„ԴՐՕՇԱԿ“
Կուսակցութեան կեդրոնական օրգան

ԺԸՆԵՎ
1907, Օգոստոս.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ՉԱՎՈՒՇ

(ՍԱՐՀԱՏ)

1871—1907

II

Փրկութեան լուրը երբ հասաւ Սասուն, արդէն մի քանի քանի տարիէ ի վեր հոն բոյն դրած նոր հայդուկներ, նոր անձնուէրներ՝ ուրախութեամբ դիմաւորելու վազեցին փախստականները. Մուրատը չի կար, բայց կար Գէորգը։ Գէորգը՝ հակառակ իր բանտակից ընկերներուն, որոնք ընկճւած կերևէին, վառվռուն և աշխոյժ էր. երկրորդ օրն իսկ հրացան կը վերցնէր ու գործի կը սկսէր։

Այս միջոցին էր որ Աղբիւր ու Թովմասը հիւսի տակ թաղւած՝ խեղդւեր էին։ Կը մնար Գէորգին՝ միացած քանի մը ընկերներու, շարունակել գործը, մինչև որ Անդրանիկն ու ընկերները կրկին վերադարձան Կովկասէն։ 1898-ին եկաւ նաև Գուրգէնը։

Նոր գործիչները ձեռնարկեցին ժողովուրդի զինման ու ինքնապաշտպանութեան դժւարին գործին, դիմաւորելով մէկ կողմէն ամէն քայլափոխի՝ կառավարութեան տևական հալածանքը, դաւերն ու ծուղակները, մնալով անօթի, անպատսպար շատ անգամ,—միւս կողմէն՝ ճեղքելով հողորդակցութեան ճանապարհներ, ցնցելով ժողովրդին յուսահատ տրամադրութիւնը և կռւելով քիւրդերու, կեղեքիչներու և բազմագոյն, բազմատեսակ բռնաւորներու դէմ։ Իւրաքանչիւր ձեռնարկի, իւրաքանչիւր շարժման վիճակւած էր՝ քիւրդի, թիւրքի, մատնիչներու կամ զօրքի հետ ճակատ-ճակատի անխուսափելի ընդհարում մը։

Վրայ հասաւ Սերոբի եղեռնական ու խուժդուժ մահը, դեղաշէնցի Ավոյի ու իր մեղսակիցներուն աններելի դաւաճանութեամբը։

Կառավարութիւնը այս վատ յաղթանակովը քաջալերւած՝ ուժեղացուց հալածանքը և արդէն կարծեց անընկճելի ոգին մահացուցած ըլլալ։ Անդրանիկի,—որ կը վարէր Սերոբի գործը—և Գէորգի ու ընկերներուն համար սկսան ամէնէն ցաւագին ու դժնդակ օրերը. Թափառական լեռնէ լեռ, ձորէ ձոր, հեռու շէնքերէ ու գիւղերէ, ստիպւած էին կորսնցնել ամէն հետք ու չորս կողմէն սեղմող կրակի շրջանակի մը մէջ ապահովութեան առասպելական ղղեակ մը գտնել։ Կառավարական բոլոր ստոյն զօրութիւնները, զօրք թիւրք, քիւրդ և ամէն ազգի լրտեսներ ու մատնիչներ՝ կը հալածէին բուռ մը յեղափոխականները՝ որ անտեսանելի, սակայն ամէնուրեք, կը մնային անհաս ու անպարտելի։

Երբ արդարութեան անողոք հատուցումը հասաւ հայ մատնիչներուն ու դեղաշէնցի Ավօյին՝ որ իր ամբողջ ընտանիքով բնաջինջ եղաւ, կը մնար վերջին դատաստանը խա-

լիլին, այդ հրէշածին պատուհասին՝ որ խմած էր Սերոբի ու հազարաւոր հայ գիւղացիներու արիւնը։ Խալիլը ինքը պատմական չարիքն էր այդ սև երկրին, որուն նամուսը, մալը, միւլքը ու կեանքը իր կրունկներուն շուքին հետ ոտքին տակ կը պտտցնէր։

Անդրանիկի ու Գէորգի ազատարար գնդակները անգամ մըն ալ ոսրային Մարնիկի վերևի ոտքին վրայ՝ յանուն տանջուած ժողովուրդի վրէժխնդրութեան։

Խալիլի սպանութիւնը ամբողջ շրջան մը կը բանայ Սասնոյ վերջին յեղափոխութեան համար՝ մինչև Առաքելոց վանքի պատմական գրաւումը։

Սասունը յեղաշրջուած էր, ինքնավստահութեան ու դիմադրութեան հոսանքը վերստին կը գրաւէր իր տեղը։

Բայց վարը, քաղաքն ու դաշտերը կը հեծէին մարակին տակ, սպաննութիւն, աւերում, հրդեհ, կողոպուտ, բռնաբարութիւն ու տանջա՜նք, տանջա՜նք...։ Ժողովուրդը ծայրայեղ յուսահատութեան ու լքումի մէջ կը դիմէր դաւանափոխութեան, ռուսական եկեղեցիին գիրկը, յուսալով ապահովութեան յենակէտ մը գտնել միայն։ Կը զոհէր իրեն համար ամենէն նուիրական զգացումը, իր պապենական հաւատքը, միայն թէ զուլումը դադրէր և արևին լոյսը քիչ մը արդարութիւն բերէր իր հետ տեղէ մը։

Ահա այս դերագոյն րոպէներուն էր որ, ինչպէս արծիւը գորշ մրրիկներու մէջէն, Անդրանիկի ու Գէորգի խումբը խոյացաւ Սասնոյ կապաններէն դէպի ցած, դէպի Առաքելոց վանքը, ցնցելու համար ժողովրդի գիտակցութիւնը։

Այս պատմական յանդուգն ու մեծ դէպքի միջոցին՝ երբ վանքը շաբաթներով պաշարուած էր զինուորական կուռ շղթայով մը, Գէորգը ցոյց տուաւ այդտեղ հիանալի ճարտարութիւն, աներկիւղ հերոսութիւն ու անձնուիրութիւն։ Այս պաշարման միջոցին էր որ՝ գիշեր մը թշնամի բանակէն յախորտալից ձայն մը կը հանէր։

—Ո՞ր պիտի փախչիք մեր ձեռքէն, թ է ս լ ի մ եղէք, թ է ս լ ի մ եղէք։

Գէորգ բրդերէն լեզուով պատասխանեց հեգնօրէն։

—Դո՛ւք, կնիկնե՛ր, որ պահուած էք դիրքերու ետև և չէք համարձակիր ձեր մաղը ցոյց տալ. դո՛ւրս եկէ՛ք, դո՛ւրս, ձեզի հաց ու ջուր տանք և հեռացէք դուք ո՛վ, կռիւը ո՛վ. . .։

Քիւրդ մը որ անկասկած կրցաւ ճանչնալ Գէորգի ձայնը՝ նոյնպէս հեգնօրէն արձագանք տուաւ։

—Վա՜յ, դո՞ւն ես, Գէորգ Չավուշ...։ (Անդրանիկին անուան միացած փ ա շ ա յորջորջումին իբր լրացուցիչ մաս՝ Չ ա վ ո ւ շ ն ալ Գէորգին անուան)։

Եւ այդ օրէն Չավուշը մնաց պատմական անուն մը, աւելի ճիշդ յիշատակ մը։

Անմոռանալի էջ մը կը կազմէ ապահովաբար, այն դիւցազնական դրւագը զարհուրելի գիշերւան մը մէջ, երբ պաշարողներուն յանկարծ իմաց տրւեցաւ թէ դ րքը յաջողած է մօտենալ վանքին և ներս խուժելու պատրաստուիլ։ Գէորգը դուրս ելաւ քանի մը կորիճներու հետ դէպի Հաւատորիկ և հազիւ փոխանակած տասնի չափ հրացան, թշնամին ետ քաշուեցաւ և մինչև վերջ որոշ հեռաւորութենէ մը առաջ չանցաւ։

Երբ հարկ եղաւ թողուլ վանքը և բարձրանալ դարձեալ լեռնային ապաստաններր, ինքը անցած իր զինւորներուն գլուխը, ռազմական հրաշալի տաղանդով մը առաջնորդեց իրեն ղեկավարութեան յանձնուած կամաւորներու ընտիր խումբը և կտրեց անցաւ զինուորական շղթան, առանց ոչ մէկ կասկած տալու թշնամիին։

Անսպասելի էր, գրեթէ գերբնական այս փախուստը, որ առասպելական գոյն առաւ և փէդայիներր եղան անխոցելի, և անըմբռնելի՝ ժողովրդային երևակայութեան մէջ։

Տարօնի աչքը՝ սրբած յուսալքութեան արցունքն ու կսկիծը իր թարթիչներէն, հիմա կը դառնար դէպի վեր, դէպի բարձունքները՝ լեցուած յոյսով ու հաւատքի սպասումով, հիմա սրտանց կողջունէր Սասունն ու անվախ փէդային։

Ժողովուրդը դուրս կուգար վհատութեան հեղձուկ խաւարէն և կը գտնէր իր հոգւոյն խորը դարձեալ ապրելու կամքը և պայքարին արիութիւնը՝ որ հաստատակութեան մը գոյութեան իրաւունքը կը հաստատէ։

Առաքելոց վանքի դիմադրութենէն հազիւ երկու ամիս անցած էր, երբ Գէորգը մղեց Նորշէնի յաղթական կռիւը՝ երեք հայերու մատնութեան հետևանքով։

Գէորգ իր մէկ քանի ընկերներուն հետ, որոնց մէջ նաև Կայծակ-Վաղարշակն ու Աստուրը, իջած էին դաշտ հարկեցուցիչ պարագաներու բերումով և կը գտնուէին Նորշէն։ Երեք նորշէնցի այլասերած կաթոլիկ հայեր կերթան քաղաք, ուղղակի միւթէսարըֆին քով, որուն հետ կունենան հետևեալ խօսակցութիւնը.

—Փաշա՛ էֆէնտի, մեր գիւղը ինը փէդայիներ իջեւանած են, որոնք կառավարութեան ձեռքը կուզենք յանձնել։

Փաշան խոժոռ ու յօնքերը պռստած, ատելութեամբ մը կը նայի այս վատորդիներուն երեսը։

—Գացէ՛ք, տեղերնիդ գացէ՛ք, կ'ըսէ բարկութեամբ, գինո՛վ հայեր, դուք այսօր խմած կերևիք ..։

—Չէ՛, էֆէնտիմ, ըստաֆուրուլլահ, մեր գլուխը կուտանք եթէ բածնիս սուտ ըլլէ, փատիշահին արևուն, Գէօր Չավուշն այդ խնզըրներուն հետ է։

Միւթէսարըֆը գլուխը կ'երերցնէ, ներքին խորունկ զղջանքով մը և կը պնդէ միշտ,

—Հայե՛ր, դուք խմած էք, վալլա՜հ խմած էք, տեղերնիդ գացէ՛ք ու անկողիննիդ հանգիստ մը քնեցէք։

--Եթէ դուք մտիկ չէ՛ք ըներ, կը կրկնեն փատիշահին սորուկները, մենք հեռագրով կը դիմենք վալիին ու հրաման բերել կուտանք...։

Զզւելի ստրկութիւնը կ'անցնէր ամէն չափ ու սահման։

—Շատ լաւ, կ'ըսէ միւթէսարիֆը, գացէք դուք, իճապին կը նայինք մենք... ու կը դիտէ այս մարդակերպ սողուններր, որոնք ցածնալով, երկրպագելով՝ դուրս կուգան կառավարական պալատէն արդէն գոհ ու ինքնաբաւ։

Հիւսէյին աղա բռւած հրէշը, որ ներկայ էր խօսակցութեան, կը գոչէ պարծենալով.

—Ես պիտի երթամ և բերեմ այդ Գէորգ Չավուշին գլուխը...

Առաքելոց վանքին վաղորդայնին էր և տակաւին տպաւորութիւնը շատ թարմ. պաշտօնեաները չափազանց բուռն ու յախուռն կը գտնեն Հիւսէյինին ոգևորութիւնը ու կ'ազդարարեն իրեն տեղը ծանր նստիլ, թողուլ եօթը աշխարհէ հաւաքւած ու պատանքը իրենց վզին փաթաթած ու այնպէս պտտելու ելած այդ արկածախնդիրներուն օձիքը։

—Խալիլ աղան աչքիդ առջև բեր, Հիւսէ՛յին աղա, կը խրատեն խոհեմները, ան Սերոբին գլուխը կտրեց, սակայն ժամանակ չանցաւ ու անոնք ալ վերջապէս իրենը մարմին վրայ կանգուն չի թողուցին, այս մարդոց հետ իյնալը չերի չէ...

—Վալլահի պիտի երթամ. այս իրիկուան իֆթարը ինծի հարամ քի՝ ես անոնց գլուխները չբերեմ...։

Եւ Հիւսէյինը բռնեց իր խօսքը։ Տղաքը յանկարծ իմացան որ գեղը պաշարուած է և Գէորգի հրամանով անմիջապէս դուրս ելաւ առաջին խմբակը՝ զարնելու և ճամբայ բանալու։

—Ճամբա՜յ, պոռացին փէտայիները հեծեալ ոստիկաններու և խուժանային բազմութեան, որոնց առջև ձիուն վրայ կը սիգար Հիւսէյին աղան։

Եւ գնդակները սուլեցին օդին մէջէն։ Առաջին անվրէպ մահացու կապարը ծակեց Հիւսէին աղայի ճակատն ու անցաւ. դիակը ձիէն վար գլորւելով Մեղրագետի ալիքներուն մէջ հոսանքը քշեց տարաւ։

Բազմութիւնը ցրւեցաւ՝ ինչպէս մշուշը զօրաւոր քամիին առջևէն, խումբի առաջապահ մասը բարձրանալով լեռն ի վեր, դրաւեց Ծծմակայ քիթը։ Երբ պաշարողները գլխիկոր ետ դարձան՝ Գէորգ իր ընկերներէն մէկ քանին սարը ճամբեց ու ինք դաշտ իջնալով կատարեց իրեն յանձնուած պարտականութիւնը ու վերստին բարձրացաւ լեռը։

Այդ օրերուն կարծես չարիք մը անդադար կը հետապնդէր զինք։ Հաւատորիկայ Շէխ-Նիստ գոմերուն մօտ հանդիպեցան քիւրդերը, հարկ եղաւ նորէն մղել ան-

նըպատակ կռիւ մը, ուրկէ յաղթական շարունակեց իր ճամբան։

Փոխադրութեան գործին վերահսկողութիւնը յանձնուած էր Չավուշին, որուն համար հարկ էր, անդուլ ու անդադար, տեղափոխութեան մէջ գտնուիլ, սարէն դէպի դաշտ ու դաշտէն դէպի սար։ Չավուշ տարիներով առանց վայրկեան մը հանգիստ առնելու, արհամարհելով յոգնութիւն ու ամէն տառապանք, եղած է մշտակայ գործունէութեան մը արթուն հոգին, և այս իսկ պատճառով ունեցած է միշտ բաղխում, միշտ ընդհարում՝ քիւրդին, թիւրքին ու իշխանութեանց հետ։

Իր մղած կռիւներուն կէսին կէսը իսկ բաւական էին պատերազմի դաշտին վրայ սեւ զօրապետի, սեւ հրամանատարի կուրծքը շքանշաններով զարդարել և անհամայնել. կռիւներ՝ միշտ անհաւասար ու հերոսական, մղած կարիճ ու զինավարժ ամենայայտնի ապստամբ քիւրդ ցեղերու դէմ. կռիւներ՝ կառավարական զօրքին ու ոստիկանութեան դէմ. կուրծք տալով ինը տասը ֆէդայիով՝ քանի մը հարիւր, հաճախ հազարէն աւելի թշնամիի դէմ, և յաղթական դուրս գալ, այո՛, հերոսի գործ էր։

Մենք կը բաւականանանք տալ հոս՝ ընդհանուր գծերով, միայն այն ճակատամարտները, որոնց մոռացութիւնը՝ աններելի զանցառութիւն և նախատինք մը պիտի ըլլար անզուգական հերոսի յիշատակին։

Քաջութեան ու սխրագործութեան կոթողներ պիտի մնան՝ հայ ազգաբնակութեան արիւնոտ ճամբաներուն վրայ, Բերդակի առաջին կռիւը, ուր մատնիչ Բարսեղի դաւաճանութեան հետեւանքով՝ Գէորգ պաշարուեցաւ Ալայ-պէյին հրամանատարութեան տակ գտնուող 200 ձիաւորներով ը և դուրս եկաւ յաղթական ու անպարտելի, գնդակով մը Ալայ-պէյիին ֆէսն ալ գլուխէն թռցնելով։ Բերդակի երկրորդ կռիւը ուր, նոյնպէս մատնութեան մը շնորհիւ, յուսաբացին իր եօթ ընկերներով պաշարուեցաւ տան մը մէջ, սակայն առիւծի պէս խոյանալով իր զինուորներուն հետ, ճամբայ բացաւ ու բարձրացաւ դէպի սարը։

Փոքրիկ խումբը, աննման արիութեամբ, քայլ առ քայլ, դիրքէ դիրք կռուելով հասաւ Հաւատորիկ. հոդ յանկարծ յայտնուեցան երկու ոստիկաններ՝ որոնք թելադրեցին հայ գիւղացիներուն զէնք վերցնել ու միանալ յարձակողներուն հետ, կոտորելու համար ֆէդայիները. և ի՛նչ ստորութիւն հայ արիւնին, գիւղացիներէն ոմանք զէնք բարձրացուցին ու կրակեցին յեղափոխականներուն վրայ։ Գէորգ, տեսնելով կայենական այս արարքը, սրտմտութեամբ ու անհուն զայրոյթով լեցուած՝ ձայն տուաւ տղոց, թողուլ բուն թշնամին և հրացանները ուղղել դաւաճաններուն վրայ։ Կռիւը առած էր մոլեգին, կատաղի ուժգնութիւն, որովհետեւ քիւրդի ու զօրքի թիւը հասած էր արդէն 1000 էն աւելի։ Բերդակէն միացած մէկ քանի անզէն երիտասարդներ՝ զբաղուած էին անդադար դիրքեր շինելու, մինչ եօթ կարիճները թռչելով միշտ մէկ դիրքէն միւսը, ճակատ կուտային ընդարձակ տարածութիւն մը բռնած և հետզհետէ աճող, հազարէն աւելի թշնամիին ու մահ ու սարսափ կը ցանէին իրենց շուրջը։ Հասան վերջապէս Ծիրին-Կատար։ Հազիւ կէս ժամ ևս տեւեց կռիւը, երբ բնութիւնը օգնութեան հասաւ։ Փոթորիկը սկսաւ ոռնալ, և դղրդել սարերը, Ծիրին-Կատարը թափ կուտար իր գլուխը առիւծի պէս բաշերը ցնցելով, հսկայ լեռներու ահեղութիւնն էր որ կը զարթնէր, կը մռնչէր որոտաձայն. այս տարերային գոռում գոչումին մէջ կը թնդային հրացանները անդադար և ֆէդայիները առաջ կը խաղային դէպի Կորեկի-Աղբիւրը, ուրկէ անդին այլեւս ամէն ինչ լռեց և խումբը գտաւ իր ապահովութիւնը։

Թշնամին տուաւ 4 մարդ և 2 ձի զոհ, բազմաթիւ վիրաւորներ, մինչ յեղափոխականներէն վիրաւորուեցաւ միայն ապաղանքցի Գալէն իր թեւէն. Գալէն, աննման, հրաշալի կարիճը որ միշտ թիկնապահն ու անբաժան ընկերը եղաւ Գէորգին մինչև վերջը, մինչև մահուան յետին րոպէն ու անոր հետ կողք-կողքի ինկաւ աղէտալի օրուան մէջ։

Թշնամի խուժանը՝ որ Մուշէն դուրս եկած էր ծուղակը ինկած այդ եօթը ֆէդայիներուն դիակները քաշելու իր եաւէն քաղաքի հրապարակին վրայ, եւ դարձաւ գլխիկոր ու ամօթահար, տանելով հետը միայն իր զոհերն ու վիրաւորները։

903-ի Սասնոյ զինուորական ժողովներուն մէջ Գէորգը ընտրուեցաւ Զին. Խորհուրդի անդամ և զինուորական երկրորդ հրամանատար. պաշտօններ, աւելի ճիշտը յեղափոխական պարտականութիւններ, որոց կիրառմանը համար ունէր բոլոր առաքինութիւններն ու արժանաւորութիւնները։

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Գանձակ քաղաքի հայերի մէջ բուն դրած մի խումբ երկչոտներ,—ինչպէս երեւում է կազմակերպական աղբիւրից առած լուրերից—ուզում են մոռացնել տալ այն լաւ յիշատակները, որոնք կապուած են այդ քաղաքի անուան հետ և արատաւորել նրան ստոր արարքներով։—Այդ երկչոտները՝ անուղղակի գործիք դարձած բարձր ոստիկանութեան ձեռքում, փորձում են վերջին դէպքերի մեղքը գցել ոչ թէ կօզակութեան, այլ յեղափոխութեան վրայ, մատնել այս կամ այն յեղափոխական գործողին, հեռացնել տալ մէկին կամ միւսին... Խորհուրդ ենք տալիս վախի ու ահի հերոսներին մի փոքր աւելի հեռատես լինել, եթէ ոչ ժողովրդի, գէթ իրենց անձի շահերի տեսակէտից...

—

Սեպտեմբերի 22-ին, կիւրակի օր, Վանի վալի Ալի-բէյը, ենթարկւեց տէրրորի Բաթում քաղաքում, իր հիւրանոցին մօտիկ։ Վէրքը մահացու էր։ Տէրրորիստը փախաւ։

—

Մեզ տեղեկացնում են Թիֆլիսից, որ Կովկասեան փոխարքայ Վօրոնցով—Դաշկով վճռել է „ամենախիստ“ միջոցներ ձեռք առնել Դաշնակցութեան դէմ։ „Դաշնակցութիւնը իմ վզին է նստել“—ասել է Նիկոլայ II-ի փոխարինողը՝ դիրք ունեցող մի անձնաւորութեան, պալատական մի տեսակցութեան միջոցին։ Մենք չը գիտենք, թէ որոնք են այն նոր „ամենախիստ“ միջոցները, որոնց մասին երազում է Կովկասի Կառավարիչը. արդէն գործ դրած անծայր բռնութիւններից յետոյ, մենք գիտենք միայն մի բան—այն, որ „ամենախիստ“ միջոցները առաջացնում են և „ամենախիստ դիմադրութիւն“...

—

Ժընեւի մօտ, Կարուժի հրէական գերեզմանատանը տեղի ունեցաւ ռուս նշանաւոր սօցիալիստ-յեղափոխական Միխայիլ Գոցի արձանի բացումը, ներկայութեամբ բազմաթիւ ռուս, հրէայ, հայ ու եւրոպացի յարգողների։ Սօցիալիստ-յեղափոխականների տեղական կոմիտէն հրաւիրել էր ի թիւս այլոց և „Դրօշակի“ խմբագրութիւնը՝ մասնակցելու այդ հանդէսին։ Զուպարով՝ սօց.-յեղափոխականների կողմից պատմեց եզակի յեղափոխականի կեանքը,—տաժանակիր աքսորում, լեգենդական փախուստի ճանապարհին և սարսափելի մահուան հանգրւանում։ Դօքտօր Վ ի ս, Ժընեւի սօցիալիստական կուսակցութեան կողմից, ողջունեց արձանի բացումը և յիշատակեց այն վաղեմի պատմաշրջանը, ուր շվէյցարական ժողովուրդը եւս յանձին իր Բերտըլէների՝ մղում էր նոյն կռիւը, գործադրում էր նոյն տաքտիկան, որ այսօր ժողովրդականանում է Ռուսաստանում։ Վ ի ս աւելացրեց, որ շվէյցարական սօցիալիստները գուրգուրանքով կը պահեն իրենց հողի վրայ թանկագին գերեզմանը։ „Դրօշակի“ խմբագրութեան ներկայացուցիչը, հանգուցեալի ու հանդէսի առթիւ մի քանի խօսք ասելուց յետոյ՝ շեշտեց համերաշխութեան այն զգացումը, որ կապում է Հ. Յ. Դաշնակցութիւնը սօց.-յեղափոխական կուսակցութեան հետ.—

„Գոցի յիշատակը թանկ է մեզ, դաշնակցականներիս, ոչ միայն իբրև ռուսաստանցի հերոս-յեղափոխականի՝ այլ մասնաւորապէս իբրև մի մարդու, որ հիմնադիր ու սիւնն է եղել սօց.-յեղափոխական կուսակցութեան, որի հետ մենք կապուած ենք ծրագրային ու տաքտիկային սերտ ազգակցու-

Թեամբ և որը ցոյց տւեց իրեն վերջին տարիներում իբրև ամենազօրծօն յեղափոխական ոյժը... Եւ մենք չենք կարող այլ կերպ յարգել հանգուցեալին, բայց եթէ ուխտել նրա գերեզմանի առջև, որ բարձր պահենք մարտական կազմակերպութեան դրօշը, ներշնչւենք կուլի այն մեծ նշանաբաններով, որոնք ոգևորում էին Միխայիլ Գօցին ու նրա կուսակցութիւնը։ Դա յայտնւում է ստիպողական մի պօստուլատ մանաւանդ այժմեան բացառիկ վայրկեանում, երբ յեղափոխութիւնը տագնապ է ապրում և ռէակցիան՝ փոքր ինչ կազդուրւած ու ամբարտաւանացած՝ փորձում է յարատևել իր ոճրալի գոյութիւնը։ Ամբողջ Ռուսաստանը—մի վիթխարի Բօյեվայա օրգանիզացիա... Այդտեղ է փրկութեան գրաւականը...“

ՆԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Բիւրօն ստացած է,

Ռուսաստան.—Ոսկանապատի Կ. Կոմիտէի միջոցով „Դրամ“ կոմիտէէն երկու անգամէն 20029 ֆր. եւ 60 սան.:

Ատրպատականի Կեդ. Կոմիտէն՝

(Շարունակութիւն № 8 „Դրօշակի“)

ՍԻՓԱՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—Բէնստր խ. 2433. 85, Դարբնի միջոցաւ ժողոված 318, Գարիբալդի խ. 305, Զասկական սեղանից 500, Ռուղշան խ. 912, Նւէրներ 602.35, Անապատ խ. 63, Դուման խ. 28, Սեփանից հականց կոպէկներից Նասիբ 218.70, Դուման 213, Բէգլար 226.75, Բաղդուց 62.70 Զէյվեցուց 80.95, Մարզայ 27. 15, Մազզայ 84.60, Սափրիչ 52, Հարես 9.65, Բէնդէրից հականց կոպէկներից Ծիծեռնակից 341.35, Թարուլից 5 40, Կռունկ 1011, Անանուն 436.55, Ոմն 117, Դողբնեցուց 81.05, Անապատից 112, Բազէ 42,70, Սիւնեցուց 57, Թուման 49.30, Հինգ ծաղիկ 130.95, Այվազ 3·85, օր. Վարդունու միջոցաւ ժողոված 50, Նւէրներ՝ Փաշ 30, Մահտեսուց 26, Արտուշ 50, Համասփիւռ 50. Ծիծեռնակ տուգանք 250, Շահսովան խ. 148.50, Նւէր Ոմն 10. վիճակախաղ 8, Աստ. 90:

ՌԱՇՏԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—1906 յունւար 1-ից մինչեւ յունիս 30, անդամավճարներ հետեւեալ խմբերից՝ Կայծակ 335, Կտրիչ 246, Հրձիգ 165, Հազրէ 234, Մեղու 138, Փունջ 211, Դղորդ Հայաստանի 305, Որոտան 166, Դեղունի 135, Կարին 235, Ղարադաղ 145, Նւէրներ՝ X. 20, Ս. Տ. Ս. 10, Տիկին Վ. Ա. 30, Մ. Մ. Յ. 30, Երեկոյթներից՝ 158, 158, 160, Ներկայացումից 177.90, Վաճառած նկարներ 227 Մուրադ օրացոյցի վաճառումից 16, 25 փամփուշտ 23.75, Հրացան 81, Դրէրի եւ նկարների վաճառումից 102, անցագիր 35, Վրէժում Մ. Զ. 700, Ե. Դ. 1200,

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—Հետեւեալ խմբերից՝ Սէր 861, Հրայր 163, Աղբիւր 254, Համօ 272, Քրիստափոր 219, Եգիպտացի 241, Պետօ 115, Նւէրներ Ս. 50, Ի. Խ. 10:

ՍԻՓԱՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—Հետեւեալ խմբերից՝ Դուման 158, Քոնուչ 456, Աստղիկ 90, Ազատ հականց տուրք 75, Կայծակ 20, Քրիստափոր 242, Գարիբալդի 573, Բէնդէր 135, Եռանդ շրջիկի համար 66.65, Ռուղշան 276, Շրջիկի համար հաւաքած 30, Վիճակախաղից 530, Շրջիկի համար 42, եւս 97.45, եւս 46, եւս 380, Ներկայացումից 407, տուգանք Բազէից 20, շրջիկի համար 80, տուգանք 24, Աւետիս մանգալուց 275, Շրջիկի համար 105, Տուգանք 200, Ճամբորդից 140, պատահական 29, հականց տուրք Ե. 65· 75, Թ. 108, Ն. 7. 75, Բ. Կ. 192. 50, Պ. Ն. 112. 60, Գ. 32. 20, Ս. Բ. 61. 35, Ծիծեռնակ 710.30, Կռունկ 1149.45, Անանուն 457.95, Թուման 224. 95, Հինգ ծաղիկ 244.50, Սիւնեցուց 109.60, Դողբնեցուց 158 80, Բազէ 12.90, Ոմն 124.40, Եղանակ 2.10 Էյվազ 3.10, Թարուլ 6.20, Խաչեան 6.70, Թաշէջեցուց 49.60, Սարդար 2.30:

ԳԱՂԱՁԱՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—Հրայր խ. 64, Աֆգան խ. 90, Խանան խ. 36, Արձագանք խ. 80, Ներկայացումից 96.25, Տուգանք Ե. եւ Վ. 140, Շահսովան խ. 163, Վիճակախաղից 12: Գումար 17250 ղռ.:

(Մաս. Ընդամէնը Դիլման կոմիտէից 1906-ին ղռան 38128.20):

ԾԱՌԱՍՏԱՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—1907 յունւար 1-ից մինչեւ մարտ 31, անդամավճարներ հետեւեալ խմբերից՝ Վազգէն 21 ղռան, Տարածող 207, Դէրիկ 101. 50, Ազրիպատեան 31. 50, Դոլոշեան 64. 50, Բարդուղիմէոս 69. 60, Ուսկոլ 25. 50, Աւետիսեան 19. 95, Միութիւն 9, Ալիք 3, Ծերունի 12, Հօգատար 43, Իրաւատիրական 12. 50, Հայրենասիրաց 10. 50, Դաշնաղբիւր 11, Հակաձոր 6. 75, Մամիկոնեան 5, Ուխտաւոր 22. 50, Արծիւ 31. 50, Քրիստափոր 30. 50, Արիստակէս 31. 50, Աւետիս մանգալուց 54, Բուժէսից 13, Զօլա 61. 75, Աւետիս մանգալուց 330 ղռ.: Գումար 1228. 5 ղռան:

ՔԱՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԷՆ.—Հետեւեալ խմբերից՝ Հարաուլ 33. 50 ղռան, Մուշեղ 37. 50. Առիւծ Ա. 15. 50, Առիւծ Բ. 18. 90. Լեւոն 45, Ծերունի 32, Մրրիկ 21. 50, Ալիք 38, Անդրանիկ 30. 50, Արամս 27, Փայլակ 15: Գումար 314.40 ղռան:

ԶՕԼԱ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԷՆ.—Հետեւեալ խմբերից՝ Զարեւանդ 38. 50, Մարդասիրական 18, Ցոլակ 56. 50, Նամուս 57, Աղբակ 21, Աւետիք մանգալուց 92. 30: Գումար 283.30 ղռան:

ՍԻԲԻՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—Հետեւեալ խմբերից՝ Կայծակ 37, Մարդասիրական 48, Բաբարան 24, Վասպուրական 15, Զէյթունիկ 18: Գումար 142 ղռան:

ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆԵՐԻ ՇՐՋԱՆԻՑ ԴՈՒՐՍ.—Երկաթ խմբից 21. 50, Դժոխք խ 28, Բրխա խ. 36: Գումար 85.50 ղռան:

ԺԱՅՌԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—Աւետիք մանգալուց 45, Կայծակ խ. 15, Որոտում խ. 36. 50, Մասիս խ. 27, Քրիստափոր խ. 23, Հայրենիք խ. 27. 70: Գումար 174.25:

Ընդամէնը Մինարէք կոմիտէից 2423.80 ղրան:

ԱՂԱԻՆԱԲԵՐԴԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ.—1906 յունւար եւ փետրւար ամիսներում անդամավճարներ հետեւեալ խմբերից՝ Կեանք 108 ղռան, Սեպուհ 82, Հրաբուխ 48, Կայծակ 42, Ծով 110, Երկաթ 32, Անդրանիկ 46: Գումար 468 ղռան:

ԴԵՏԱՒԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—Անդամավճարներ հետեւեալ խմբերից՝ Դուման 21 ղռան, Զագրօշ 20. 70, Ազրայիլ 16. 60, Արամազդ 18, Արարատ 18. 50, Սամսոն 15. 20: Գումար 110. 90 ղռան:

ԱՅԴԵՍՏԱՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—Անդամավճարներ հետեւեալ խմբերից՝ Դալի-Բաբա 24, Անդրանիկ 26, Հրայր 10, Քրիստափոր 19, Վահան 20, Բարգէն-Սիւնի 8, փետրւար 9-ի ներկայացումից 1250 ղռ. Նոյն ներկայացման Կայծակ խմբի վիճակախաղից 1170, Սեպուհ խ. աւետիս մանգալուց 200, Երկաթ խ. նոյնպէս 70: Գումար 2797 ղռ.:

ԴԵՏԱՓԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—1906 մարտ 1-ից մինչ 1907 մայիս 30, անդամավճարներ հետեւեալ խմբերից՝ Աստղ 589 ղռան, Դրական 266, Արշալոյս 159. Աստղ դաշտային հանդէսից 88, Դրական, Անահիտ, Մասիս, Արամս, Յոյս եւ Հայկազեան խմբերի ձեռագործի վիճակախաղից զուտ արդիւնք 436. 15, վիճակախաղից մնացած նիւթերի վաճառումից՝ Յոյս խ. 30, Արշալոյս խ. 17, Դրական խ. 3. 50, Արշալոյս խ. հրատարակութիւնից 25, Նւէրներ՝ Դ. Ս. 100, [illegible]. Կ. 20, Յ. Տ. Յ. 50, Ն. Դ 10, Յ. Կ 30, Ս. Մ. Ս. 30, Ա. Թ. 30, Կ. Մ. Բ. 20, Ս. Ա. 50, Հ. Յ. 20, Է. Մ. 10, Ն. Տ Գ. 10, Կ. Տ. Մ. 10, Դրօշակ 72: Գումար Դետափի շրջանէն 2069.65 ղռան:

Ստացւած են նոյնպէս նւէրներ՝ Զօկից Կարմիր Խաչի խմբերի համար մէկ կարի մեքենայ Զինկէրի, Ն. Ս. մէկ ատրճանակ:

ՇԱՀԻ ԿՈՄԻՏԷ.—1906 յունւար 1 ից մինչեւ սեպտեմբեր վերջ անդամավճարներ հետեւեալ խմբերից՝ Արարատ 190 ղռան, Կարկառ 430. 50. Վտակ 106, Կաքիլ 585. 50, Կայծ 282, Վրէժ 153, Անդրանիկ 360, Քրիստափոր 379, Ամազօն 660, Մսօ 99, Ալվանդ 187. 50, Դամավանդ 300, Համբարական 56: Գումար 3788. 50 ղռան:

Աւետիս մանգալուց 1330, Կաքիլ խմբի երեկոյթից 430, Ամազօն խմբի երեկոյթից 380 70, Կաքիլ խ. պարահանդէսից 2060, Կայծակ եւ Վտակ խմբերի դաշտային հանդէսից 1530, Վրէժ խմբի վիճակախաղից 180: Գումար 5910 ղռան:

1907 յունւար 1-ից մինչեւ յունիս 30 անդամավճարներ հետեւեալ խմբերէն՝ Քրիստափոր 48, Արամս 141, Ամազօն 175, Դամավանդ 150, Ալվանդ անդամավճար եւ երեկոյթ 783. 45, Վրէժ անդամավճար եւ նւէր 106, Կաքիլ անդամավճար եւ երեկոյթ 939, Կայծ եւ Վտակ անդամավճար եւ երեկոյթ 1035.20 ղռան: Գումար 3377·65 ղռան:

Ընդհ. համագումար 59074 ղռան 40 սարտիմ:

Պուլղարեան Կեդր. Կոմիտէ՝

ՍԼԻՎԷՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԷՆ.—Հետեւեալ խմբերէն՝ Սէրէմնեան 30 լէվ, եւս 15. 80, Կայծակ 30, եւս 18, Քրիստափոր 21, եւս 4. 40, Վասպուրական 27, Պետօ 125. 25, Դրախտ 76, Ազատ 71, Հրայր 40, Անդրանիկ 51. 65, եւս 20, եւս 25, Արաքս 20. 90, եւս 20. 90, Սերոբ-Աղբիւր 36, եւս 36 լէվ: Գումար 668 լէվ 90 սանթ.:

ՎԱՌՆԱՅԻ ԿՈՄԻՏԷԷՆ —Կարմիր խաչի խումբերէ 102. 40, Արամս խումբի վիճակահանութենէն՝ բանտարկեալներու օգտին 505 60: Գումար 608 լէվ:

ՇՈՒՄԼԱՅԻ ԽՈՒՄԲԵՐԷ.—Ուժանակ 33, Կայծակ 7, Անդրանիկ 8. 50: Գումար 48 լէվ 50 սանթ.:

Ընդհանուր գումար 1325 լէվ 40 սանթ.:

Այս համարը բաղկացած է 20 երեսից